

«ԳործԱրար» ամսագրի մասին

Տարիները գլորվում են, ներկան անցյալ է դառնում, պատմության գիրկն են անցնում ապրած ու ժամանակագրությունը և դրանց հետևանքները ժողովուրդների բարեկամության պայծառ էջերը... Այս իրողության գիտակցումով Ռուսաստանի առավել գործունյա և աշխույժ հայկական գաղթօջախներից մեկում՝ Կալուգայում 1999 թ. հուլիսի 7-ին ծնունդ առավ ևս մի մեսրոպատառ լրատվամիջոց-հանդես: «ԳործԱրար» հանդեսը Հայաստանից Ռուսիա գաղթած «ԳործԱրար» ամսագրերի ծնած հրաշամանուկն էր: Դարավոր հայ մշակույթը նոր Ռուսիայում ապրեցնելու առաքելությամբ քրիստոնյա «մանուկը» իր ծնողների սիրո պտուղն էր և բնականաբար կարիք ուներ կնունքի: Աստծո կամոք «ԳործԱրար»-ի կնքահոր պատիվը վերապահվեց Կալուգայի լրագրող, պոետ, «Վեստ» թերթի հիմնադիր և նրա առաջին գլխավոր խմբագիր Ալեքսեյ Պետրովիչ Չոլոտիևին, ով կնքահոր առաքելությունն ստանձնելով, հոգաց նորածին «ԳործԱրար»-ի երջանիկ մանկությունն ու կանաչ ճանապարհը ապահովելու հիմնախնդիրը:

Երկրագուն՝ հայերեն ու ռուսերեն նկարագարող, գունավոր ու շքեղ տպագրությամբ ամսագիրը հրատարակվում էր Ռուսաստանի կենտրոնում՝ Կալուգա քաղաքում, ուր մեծ թվով հայեր էին ապրում: Նշանակալի երևույթ էր: Նպատակն էլ մեկն էր՝ միավորել արտերկրի հայերին, նպաստել հայ-ռուսական բարեկամությանը, նախանձախնդիր լինել Հայաստանի և Ռուսաստանի տնտեսական, մշակութային կապերի ամրապնդմանը:

Տարիներ շարունակ հանդեսը դրվել է ընթերցողի սեղանին՝ չկորցնելով իր դեմքը: Իսկ դեմքն այդ ներկայանալի է ճշմարիտ խոսքով, որով կամրջվում են մայր հայրենիքն ու սփյուռքը: Կարևոր շեշտը դրվում է ոչ թե նյութական արժեքների, շլացնող շքեղության, այլ ազգային գաղափարի ու դրա շուրջը հայ ժողովրդի համախմբման վրա:

«ԳործԱրար»-ն իր էջերում պատկերում է սփյուռքահայ (հատկապես Ռուսաստանի Դաշնությունում ապրող մեր հայրենակիցների) ազգային ու մշակութային կյանքը, արձագանքում է հայրենի մշակույթի և գիտության նվաճումներին, դառնալով սփյուռքահայությանը Հայաստանին կապող օղակներից մեկը: Ամսագիրը հայերեն և ռուսերեն լեզուներով տեղեկացնում է թե Հայաստանում, թե Ռուսաստանի հայկական գաղթօջախներում տեղի ունեցող հիշարժան իրադարձությունների մասին: Կենսատու բարեգործության ոգին արթնացնելու և հայանպաստ ձեռնարկումներում հայ գործարարներին ներգրավելու նպատակ հետապնդելով՝

գրավիչ հոդվածներ են տպագրվում Գալուստ Գյուլբենկյանի, Ալեք Մանուկյանի, Զորք Զորքորյանի, Սամվել Կարապետյանի, Ռուբեն Գալստյանի, անցյալի և մերօրյա մյուս երևելիների մասին: Բնականաբար, «ԳործԱրար»-ն իր էջերում չի մոռանում անդրադառնալ իր ակունքներին: Տարաբնույթ կյուրթերի թվում ներկայացվում են Լոռու մարզի արվեստագետների ստեղծագործություններ, նրանց մասին դիմանկար-ակնարկներ:

«ԳործԱրար» ամսագրի անցած ճանապարհը, ինչպես ամեն մի երևույթի ընթացք, սկսվել է առաջին քայլից: Առաջին քայլերը համարձակ ու հաստատուն էին, որովհետև կատարվեցին գործարար Սամվել Կարապետյանի գործուն աջակցությամբ ու մասնակցությամբ: Եվ պարբերականը կայացավ: Այդ են վկայում այն բազմաթիվ շնորհակալագրերը, որ հասցեագրվում են ամսագրին: Հայոց ազգային ինքնության պահպանման գործում ներդրած մեծ ավանդի համար 2010թ. «ԳործԱրար» հանդեսը արժանացավ ՀՀ Սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի «Սփյուռքի լավագույն հայկական լրատվամիջոց» մրցույթի մրցանակին: Անհերքելի է, որ յուրաքանչյուր լեզու իր հողում, իր հայրենիքում է գրնգուն ու գորեղ: Այնուամենայնիվ, կարծում ենք վերապահումները բացառելի չեն: Մասնավոր, երբ խոսքը վերաբերում է դրսում հայի որակակնիչը, հայրենասերի վարկը բարձր պահող, պատմամշակութային արժեքներ քարոզող խոսուն վաստակով ու ձեռքբերումներով բովանդակալից հայաշունչ պարբերականին: Տարիների ընթացքում տպագրված ավելի քան 282 համար, ամեն մեկն ավելի քան 5 մամուլ: Ասել է՝ տասնյակ հաստափոր գրքեր, որոնցում ներկայացված են հայ համայնքներ, մշակույթ, պատմություն, մեծանուն մարդիկ...

Հարգարժան Բեկչյան, ընդունեք ջերմ շնորհավորանքներ՝ Լյուբերցիի հայ համայնքի նախագահ Տիգրան Միքայելյանի և հայկական կիրակնօրյա դպրոցի անձնակազմի կողմից՝ «ԳործԱրար» ամսագրի 25-ամյա տարեդարձի առթիվ:

Ընդունեք նաև մեր՝ ընթերցողներիս շնորհակալական խոսքը՝ կուլտուրայի բաժնի միջոցով լուսավորություն տարածելու Ձեր հայրենանվեր և հայապահպանության համար կատարած դժվարին, բայց շնորհակալ աշխատանքի համար:

Ինչը կարող է օտարության մեջ ապրող հայուկանցը հայ պահել, եթե ոչ հայ մամուլը, առկա՝ «ԳործԱրար» ամսագիրը:

Սայա ՉՍԽԱԼՅԱՆ,

Լյուբերցիի կիրակնօրյա հայկական դպրոցի հիմնադիր ուսուցչուհի

Շնորհավորանքներս «ԳործԱրար» ամսագրի, «Բարի առավոտ» թերթի հիմնադիր, գլխավոր խմբագիր պարոն Վահրամ Բեկչյանին

Երկար տարիներ հոգով ու սրտով լինել Սայր Հայրենիքի հետ, բայց ֆիզկապես ապրել նրանից հազարավոր կիլոմետրեր հեռու...

Այդպես արդեն 25 տարի Ռուսաստանի Կալուգա քաղաքում կանոնավոր լույս տեսնող երկլեզու ռուս-հայկական «ԳործԱրար» ամսագիրը որպես մուկնեղիկ համբերատար, խոսքի ու իր գործի կարևորությունը գիտակցելով ավետում է հայկականությունը ողջ Ռուսաստանի ու նախկին հորհրդային պետությունների տարածքում:

Ճանաչանալով «ԳործԱրարի» և նրա հավելված «Բարի առավոտ» թերթի անցած հարուստ ուղուն, ռուսաստանյան մամուլի դաշտում ծավալած գործունեությանը՝ ըստ արժանվույնն են մատուցում հետսովետական ծանր շրջանում մեկ քառորդ դար ձեռք գարկերակին պահող հայ տպագիր մամուլի ունեցած ձեռքբերումներին ու հաջողություններին: Ասել, որ անցած 25 տարիները երկլեզու տպագիր մամուլի համար եղել են հարթ, միայն համայնքային կյանքն ու մշակութային անցուղարձը, Հայաստան-Ռուսաստան երկկողմ հարաբերությունները արձանագրող տարիներ, նշանակում է ոչինչ ճասել հանդեսի էջերում տարբեր տարիներին բարձրացված, ռուս հասարակության մեջ հայությանը հուզող այնպիսի խնդիրների մասին, ինչպիսին տարածաշրջանում Ռուսաստանի ազդե-

ցությամբ Հայաստանի ունեցած միջազգային հարաբերություններն են: Եվ այս նուրբ աշխատանքն արվում է միայն բացառիկ նվիրվածության և հայրենասիրության մղումներից ելնելով՝ «ԳործԱրար» ամսագրի և նրա հավելված «Բարի առավոտ» թերթի հիմնադիր, գլխավոր խմբագիր, Ռուսաստանի լրագրողների միության անդամ, Կալուգայի մարզի զանգվածային լրատվական միջոցների վաստակավոր աշխատող Վահրամ Բեկչյանի կողմից:

Բարձր գնահատելով Ռուսաստանի հայաշատ համայնքում «ԳործԱրար» ամսագրի առաքելությունը, հատկապես այս օրերին գնահատվում է նրա ներկայիս ու հետագա դերը հայ-ռուսական առողջ հարաբերությունների ձևավորման շրջափուլում, թող որ սրտաբուխ խոսքը, պատգամը ներկա ժամանակների հայկական ուղեկից փարոսը լինի առաջիկա բոլոր հոբելյանական տարեթվերի:

Զեզ երկար ընթացք, «ԳործԱրար»: Զսասանինգամյա տարեդարձի առիթով մաղթում եմ երկար, կանաչ ճանապարհ ու հարատևություն:

Աշոտ ԿՆՅԱԼՅԱՆ,

Նիդերլանդական հայ համայնքի կյանքը լուսաբանող «Նիդերլանդական օրագիր» էլ. թերթի հիմնադիր, գլխ. խմբագիր

Дорогой Ваграм! В темном царстве невежества, в коем пребывает большая часть наших соплеменников, покинувших родину, издаваемый тобою журнал подобен Лампаде Просветителя... Стосковавшие по родному языку твои читатели, листая его, испытывают те же чувства, что и царь Аршак, ступивший во вражеском шатре на родную землю... Ты едва ли не единственный светоч на чужбине,

в диаспоре, которой пока не удается осознать себя в быстро меняющемся мире. Здесь ты достойный правопреемник Маштоца и хранитель исторической памяти народа.

*Ашот Аристакесович САГРАТЯН,
переводчик, литературовед, эссеист, художник и педагог.*

Поздравление с юбилеем, 25-летием русско-армянского журнала «ГОРЦАРАР»

У нашего армянского народа есть такая особенность, оказавшись вдали от Армении, они на чужой земле создавали учебные заведения, печатные издания, издавали свои журналы. В Европе – Амстердаме, в Азии – в Калькутте, в России – в Санкт-Петербурге.

Дорогой Ваграм Владимирович, Вы не нарушили эту благородную традицию: оказавшись в городе Калуге, как и бывшие наши предки: патриоты истории, родного языка начали издавать армянский двуязычный журнал «ГОРЦАРАР», которому сегодня – 25 лет. Этим Вы помогли землякам быть в курсе событий, происходящих как в Армении, так и во всем мире.

Журнал «ГОРЦАРАР» твердо вошел в Армянскую энциклопедию как двуязычный летописец не только жизни московской диаспоры, но и многих других городов России.

Поздравляю Вас и Ваших читателей с этой почетной датой – 25 лет.

*Роберт Заветович БАБЛОЯН,
писатель, журналист и художник.*

07.07.2024.

**Многоуважаемый ВАГРАМ БЕКЧЯН
и коллектив редакции журнала «Горцарар»**

Примите наши искренние поздравления по случаю 25-летнего юбилея международного двуязычного русско-армянского журнала «ГОРЦАРАР».

Выражаем Вам нашу искреннюю благодарность за постоянное освещение всех наших благотворительных и патриотических инициатив-мероприятий, проводимых нашим международным центром в Армении и странах Европы.

Желаем Вам и Вашим коллегам благополучия и успехов в ваших плодотворных деяниях.

От имени руководителей благотворительных центров «ИНТЕРКАП» Армении, Германии и Франции

Норайр ЗУЛЯН.

07.07.2024.

Շնորհավորում եմ «ԳՈՐԾԱՐԱՐ» հանդեսի հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ: Չնահատում և արժևորում եմք հանդեսի քառորդդարյա անցած ուղին և կատարած հսկայածավալ աշխատանքը ի պահպանություն հայ ազգային արժեքների: Ձեր կատարած աշխատանքը հատկապես կարևորվում և արժևորվում է սփյուռքում: Մաղթում եմք հետագա ստեղծագործական նորանոր բարձունքների նվաճում: *Հարգանքներով՝ Արթուր ՂԱՐՎԱԶՅԱՆ
hhtert.am կայքի խմբագիր*

ՄԱՇՏՈՑ կրթամշակութային կենտրոնի նախագահության և «ՄԱՇՏՈՑ» հանդեսի խմբագրակազմի անունից սրտանց շնորհավորում եմ «ԳՈՐԾԱՐԱՐ» հանդեսի լույսընծայման 25-ամյակի առթիվ, մաղթում պահանջարկված երկարակյացություն և բազմաթիվ բարձրաճաշակ ընթերցողներ: *«ՄԱՇՏՈՑ» հանդեսի խմբագրապետ
Փազիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ*

Սրտանց շնորհավորում եմ «ԳՈՐԾԱՐԱՐ» հանդեսի խմբագրակազմին հանուն հայրենիքի և հայության 25-ամյա շատ առատ ու օգտակար գործունեության համար: Ի սրտանց ցանկանում եմ նոր նվաճումներ, նորանոր հաղթանակներ, հաջողություններ ու ամենայն բարիքներ: *Մեծ սիրով ու հարգանքով՝
Լևոն ՂՈՍԲԵԼՅԱՆ
քաղաք Աստրախան*
7 հուլիսի 2024 թ.



Двум народам божий дар –
Двуязычный «Горцарар»!

Труд в основе, дружба в корне,
Просвещает всесторонне
Вот уж 25 лет подряд
Он на все имеет взгляд!

Этот взгляд стремится в вечность,
В нем основа – человечность,

Потому что слово – храм,
Честь, хвала тебе, Ваграм!

Это детище твое,
Пусть живет сто лет оно!
Развивает, побуждает,
Радует и прославляет

Труд и дружбу всех людей,
Ширит круг своих друзей!

Серго АРАКЕЛЯН.

ԻՆՆՍՈՒՆԱՄՅԱ ՀՈՒԲԵԼՅԱՐԸ

Մարտի 1-ին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում ջերմ մթնոլորտ էր: Մարտի 1-ին՝ զարնան առաջին օրն է ծնվել գիտական այս կառույցի երկարամյա աշխատակից, Բանագիտության բաժնի

առաջատար գիտաշխատող, անվանի բանահավաք և բանագետ, բ.գ.դ. Վերժինե Գառնիկի Սվազյանը: Ներկաները՝ պատմաբաններ, հնագետներ, բանասերներ, այլ բնագավառների ներկայացուցիչներ, ծափողջյուններով դիմավորեցին հոբելյարին:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրություն ինստիտուտի տնօրեն Արսեն Բորոխյանը ողջունեց ներկաներին և ասաց. «Ջերմագին շնորհավորում ենք մեր վաստակաշատ բանագետ-բանահավաքին իր 90-ամյա հոբելյանը բոլորելու առթիվ, մաղթում ենք արևշատություն և ստեղծագործական նորանոր ձեռքբերումներ»: Նույն ինստիտուտի փոխտնօրեն Տորք Դալայանը համառոտ ներկայացրեց Վերժինե Սվազյանի կենսագրական ու գործունեությունը: Ծնվել է 1934 թվականի մարտի 1-ին Եգիպտոսում: 1947-ին Սվազյանների ընտանիքը հայրենադարձվում է Մայր Հայաստան: 1956 թվականին Վերժինե Սվազյանը գերազանցությամբ ավարտել է Երեվանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական բաժինը: Ստեղծագործական կյանքի ընթացքում Վ. Սվազյանը հեղինակ է 500-ից ավելի գիտական և հրապարակախոսական հոդվածների, շուրջ 30 գրքերի, որոնք տարբեր լեզուներով լույս են տեսել Հայաստանում և Սփյուռքում: Վ. Սվազյանը հատկապես հայտնի է Հայոց Զեղասպանությունը վերապրած ականատես-գոհերի բանավոր պատմությունները գրանցելու և հրատարակելու իր անխոնջ գործունեությամբ: Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա աշխատությունները թարգմանվել և հրատարակվել են իսպաներեն, հինդի, չեխերեն և այլ լեզուներով: 1958-1961 թթ., հայտնի ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի գիտական ղեկավարմամբ, ուսումը շարունակել է ԳԱ ասպիրանտուրայում՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» մասնագիտությամբ: Ասպիրանտական ուսումնառության ընթացքում եղել է Մ. Աբեղյանի անվան թոշակառու: 1996-2004 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, իսկ 1996-2018 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության, ինչպես նաև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտներում գործող մասնագիտական խորհուրդների անդամ:



մարդկության դատին: Բազմամաստակ գիտնական արժանացել է հայրենական և արտասահմանյան ավելի քան երեք տասնյակ պարգևների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործում նշանակալից ավանդ ներդրելու համար ՀՀ Նախագահի Առաջին մրցանակի և «Ոսկե հուշամեդալի» (2006), «Մովսես Խորենացի» մեդալի (2013): 2016 թվականին գիտության և կրթության բնագավառում ունեցած վաստակի համար շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Այնուհետև եղան ելույթներ տարբեր մտավորականների կողմից, ովքեր ժամանակին աշխատել են, համագործակցել Վերժինե Սվազյանի հետ: Բոլորն էլ սիրով արտահայտվեցին իսկական հայի, գիտնականի, լավ մարդու մասին: Ներկայացրեցին նրա հրաշալի կերպարը, աշխատասիրությունը, հզոր կամքն ու ձգտումը, որի շնորհիվ կարողացել է մեծ գործ կատարել: Նշվեց նաև՝ 2000-ին, վեց լեզվով, այդ թվում՝ թուրքերեն, հրատարակվել է «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» ծավալուն աշխատությունը: Դրա համար հեղինակը վաճառել էր հարսանեկան մասուկ-սկեղեղներ, հայրական թանկարժեք նվիրույթությունները՝ գորգեր, այլ պարագաներ: 2020-ին լույս է տեսել նաև «Հայոց ցեղասպանություն. ականատես ապրողների վկայություններ» գիրքը, որում 600 վկայություններ են, երգեր, գրույցներ:

Վ. Սվազյանը, հայտնելով շնորհակալություն, իր հասած հաջողությունները համարեց համատեղ աշխատանքի արդյունք: Սակայն կարևորեց հոր դերը, որ ինքը կարողացել է հասնել նման հաջողությունների: Հայրը՝ արձակագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ, ծաղղանկարիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1947) Գառնիկ Մարկոսի Սվազյանը վախճանվել է 44 տարեկան հասակում, սակայն հասցրել է դասերը դաստիարակել հայրենիքի իսկական զավակ: «Մեծ է հորս դերակատարումն իմ հոգեգիտակցական աշխարհի ձևավորման գործում: Տակնվրա մանուկ հասակից ես միշտ ներկա եմ եղել, մասնակցել եմ նրա կազմակերպած բոլոր միջոցառումներին, հասարակական-քաղաքական ձեռնարկումներին, ինչպես մայր հայրենիքում Հովհաննես Թումանյանի հիմնադրած Հայաստանի օգնության կոմիտեին աջակցելը՝ հայրս ՀՕԿ-ի մասնաճյուղի նախագահն էր Ալեքսանդրիայում. նա դրամահավաքներ էր կատարում և ուղարկում հայրենիք՝ նպաստելով երկրի վերաշինությանը: Նույնիսկ Լենինականի տեքստիլ տրիկոտաժի ֆաբրիկայի առաջին դագաղները 1930-ականներին հայրս է ուղարկել Եգիպտոսից», – ասաց Վ. Սվազյանը:


Ցերեկային ավարտին Վ. Սվազյանն իր հեղինակած «Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովություն» խորագրով գիրքը (904 էջ), որը բացվում է «Հայերի տեղաբաշխումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում» քարտեզով, մակագրեց և նվիրեց ներկաներին: Այս գիրքը 40 տարիների ստեղծագործական աշխատանքի արդյունք է: Վ. Սվազյանը 1979, 1990, 2001, 2004, 2008 թթ. այցելել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, եղել է տարբեր քաղաքներում, հանդիպել ամենատարբեր զբաղմունքի ու տարիքի հայերի հետ, հավաքել ամերիկահայերի բանավոր ստեղծագործության հյուսվածքները՝ դրանք դարձնելով առաջինը հայ ժողովրդի սեփականությունն ու ավանդ սերունդներին: Դրանք նաև հարված են անարդարությանը: Տեղեկացնեմ՝ 2022 թվականին, երբ դեռ գործում էր «Հայաստանի Հանրապետություն» թերթը, Վերժինե Սվազյանը մի քանի անգամ հյուրընկալվել է խմբագրությունում:

Չոհրաբ ԸՈՔՈՅԱԼ



Սկսած 1955 թվականից՝ ավելի քան 65 տարիների ընթացքում, անձնական նախաձեռնությամբ, գրառել, ձայնագրել, տեսագրել, ուսումնասիրել և հրատարակել է Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի ավելի քան 150 հայաբնակ բնակավայրերից տեղահանվածների բարբառներով հաղորդած ժողովրդական բանավոր ավանդության նշխարները: Առավել կարևորել է նրանց կողմից արված փաստավավերական վկայություններն ու պատմական երգերը՝ հայերեն և թուրքալեզու: Դրանք հետագայում արդեն գրքի ձևով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, ներկայացրել է համայն

ՆԱ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՏԵՍԱԿՆ ԷՐ



Ցանկացած ազգ-էթնոս իր պատմության ճանապարհը չի կարող անցնել առանց ազգային մշակույթի: Իսկ այդ կարևոր առանձնահատկությունն ինչքան էլ ժողովուրդն իր հետ տանի, պահելու համար, միևնույն է՝ պետք են անհատներ, ովքեր մշուշի միջից դուրս կհանեն արմատականը, ազգայինը, սեփականը: Այդ անհատներից է Գագիկ Գինոսյանը, ում Ամենայն Հայոց Պատուոյց կոչումը տվել է ժողովուրդը: Կառավարությունը տալիս է նման կոչումներ՝ «Ժողովրդական», «Վաստակավոր» և այլն, բայց այլ է, երբ ողջ ազգն է միաձայն այդ կոչումը շնորհում իր նվիրյալ զավակին, հավատում ու պաշտում է նրան: Դեռևս երիտասարդ, դեռևս շատ անելիքներ ուներ Գագիկ Գինոսյանը, բայց ճակատագիրն իրենն ասում է:

Մեծ ցավ ու կորուստ է մեր ազգի համար, բայց նա իր մահով էլ մեծ եղավ: Ողջ համացանցը, լրատվական միջոցները Գագիկին են ներկայացնում այս օրերին: Ժամերով սպասում էին մարդիկ Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցի մտնելու, նվիրյալ հայրորդու հոգեհանգստյան կարգին մասնակցելու համար: Նույնը՝ հուղարկավորության ժամանակ: Երիտասարդներ, շատ երիտասարդներ էին մասնակցում այս արարողություններին, ճանապարհում էին իրենց Մեծ ուսուցչին: Ուսուցիչ. առաջինը՝ գաղափարի՝ Ցեղակրոն, Նժդեհապաշտ, հայրենամուտ, Արցախյան պատերազմների ռազմիկ: Գագիկի մտերիմ մեկ այլ ազգային գործիչ Գուրգեն Մելիքյանը նշեց՝ վաղուց է ճանաչում նրան, ու միասին տարբեր ծրագրեր են իրականացրել, ասաց. «Նա հայ մարդու տեսակն էր»: Իսկ նրա դերը հայ պարզ դարերի խորքերից գտնելու, սովորելու ու սերունդներին հասցնելու գործում շատ մեծ է: «Որ ասում են՝ հայը ո՞րն է, ես Գագիկ Գինոսյանին եմ պատկերացնում», – ասաց ճանաչված դերասան Դավիթ Հակոբյանը, ով չկարողացավ արցունքը զսպել, երբ կամերային երաժշտության շենքի մուտքի մոտ հնչեց «Յարխուշտա»-ի երաժշտությունը:

Շատերն են Գագիկին համեմատում Կոմիտասի հետ, ու դա պատահական չէ: Դերասան և հաղորդավար Արսեն Ղազարյանը, ով հաճախ է վարել «Կարին»-ի համերգները, Գագիկի մտքի մոտ ասաց. «...Դու Կոմիտասի թոռն ես, Հայրիկ Մուրադյանի որդին, Նժդեհի ու Հայկ Ասատրյանի ոգեղեն զավակը, Լեոնիդի գինվորը, «Կարին» տոհմածաղիի հիմնադիրը: Պտուղները քաղցր են, ու շիվերը՝ դալար: Կոչված ես դու վերին կամքով որպես պայծառ մի ասպետ, գնա ասպետներից մոտ, որ կանչում են քեզ...»: «Երբ Արցախում մշակույթի նախարար էի, Գագիկ Գինոսյանի հետ համատեղ ծրագրեր ենք արել. իր շնորհիվ մենք հայկական պարը բերեցինք Արցախ: Մինչև վերջին օրերը մենք իրար հետ միասին աշխատում էինք: Գագիկ Գինոսյանը հայրենիքի գինվոր էր, բայց նա սովորական ազատամարտիկ չէր, նա հայկական ինքնության պահապաններից էր: Ամենևին զարմանալի չէ, որ նրա սիրտը չհիմնացավ, որովհետև երբ այսպան թիրախավորվեց ու խոցելի դարձավ հայկական ինքնությունը, պարզ էր, որ նման մարդիկ չեն կարող անտարբեր լինել: Կարծում եմ՝ այդ անգործության

զգացողությունից, ըմբոստությունից, ցասումից նրա սիրտը չհիմնացավ», – Գագիկի հուղարկավորության օրն ասել է Արցախի մշակույթի նախկին նախարար Նարինե Աղաբալյանը: Ինչ խոսք, Արցախյան 2020 թ. 44-օրյա պատերազմը և դրան հաջորդող ծանր իրադարձությունները մեր ազգի համար, իրենց սև բիծը շատերիս սրտում են թողել, ու հեշտ չէ դիմանալ: Դատեր՝ Շովինարի ասելով՝ հայրը, որ երբ հարցրել է՝ ունց ես, միշտ պատասխանել է լավ եմ: Սակայն 2020 թ. պատերազմից հետո «Լավ եմ» խոսքը փոխարինել է «Պինդ եմ»-ով: Այո, մարդ պինդ պետք է լինի, որ դիմանա նման ցավի ու կորստի: Գագիկին հուղարկավորեցինք, 2001 թ. իր կողմից հիմնադրված, «Կարին» ավանդական երգիկարի խմբի տղաների (Գագիկն ասում էր՝ «իմ տղերք») կողմից կատարած «Յարխուշտա» ռազմական պարով՝ Կամերային երաժշտության տան բակում և Ամենայն սրբավայր Եռաբլուրում: Այստեղ նա միացավ Հայոց Լուսե բանակի տղերքին:



40 տարի առաջ, երբ հուղարկավորում էին Շիրազին, նույն պատկերն էր, ինչ եղավ Եռաբլուրում. իր զավակին ժողովուրդն է պաշտում, անկախ կառավարական գործողություններից: Եռաբլուրում երգիչ, Գագիկի մտերիմներից Արսեն Համբարյանը կատարեց «Ձայն մը հնչեց» («Շարժում հայրենեաց Կարևոյ») երգը: Պատահական չէր այդ երգի ընտրությունը. Արմատներով Հայոց Կարին-Երզրում քաղաքից է Գագիկը: «Նվիրյալները որք են մտում ու խոցելի», – ասաց Արսեն Համբարյանը երգից հետո: Ու Եռաբլուրում բռնեց Հավերժի ճամփան ազգի նվիրյալը, ով ասել է. «Օտարի համար հանճարեղ տաճար կառուցելու փոխարեն՝ սեփական տաճարիդ գեթ մեկ քար ավելացրու, թեկուզ, ստիպված լինես այդ քարն ամբարնող շաղախի մեջ քո հանճարն անգամ թաղել»: Հիրավի, Հայոց հազարամյա մշակութային ու ռազմական տաճարի շաղախի մեջ է անթեղված Գագիկի հանճարը, և այն մշտապես է բորբոքելու հայի սրտերը: Այդ անթեղն է հատկապես այն, որ այսօր մեր դպրոցներում Գագիկի ջանքերով ուսուցանվում է ազգային պարը, և նրա հուղարկավորության օրը շատ դպրոցներում աշակերտները պարով հարգեցին իրենց ուսուցչի հիշատակը:

11 տարի առաջ՝ ապրիլի 27-ին, Քաջաթաղի շրջանի Կովսական քաղաքում հերթական անգամ հանդիպեցի Գագիկին: Կովսականի միջնակարգ դպրոցը կոչվում էր ազգի մեկ այլ նվիրյալ, Ամմահուլայան ճանապարհի բռնած Թաթուլ Կրպեյանի անունով: Եվ Քաջաթաղի շրջանի հարավային թևի Կովսականում Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի հիշատակին նվիրված համերգին մասնակցում էին ճանաչված երգիչներ Մկրտիչ Մկրտչյանը՝ Մկրտ, ով նույնպես արդեն հավերժի ճամփորդ է, և նրա մահվան առթիվ Գագիկն ասել է. «Ընկավ հզոր կաղնին...», Դավիթ Ամալյանը, Արսեն Գրիգորյանը՝ Մրոն, Լեյլա Սարիբեկյանը, Գոհար Հովհաննիսյանը, Ռուբեն Սասունցին, Արաբո Իսպիրյանը: Համարելի ընթացքում Գագիկ Գինոսյանի գլխավորությամբ բազում հրաշալի պահեր նվիրեց ներկաներին «Կարին» հա-

ՆԺՏԵՅՅԱՆ ՈԳՈՎ, ԱՉՆԱՎՈՒՐՅԱՆ ԵՐԳՈՎ, ԳԻՆՈՍՅԱՆԱԿԱՆ ՊԱՐՈՎ

«Ծանոթանալը... Ես կարնեցու տոհմիկ ժառանգ, Ազգանուն մի տոհմածառ, իսկ անունս՝ նոր գաղտնագիր, Մնացածը ամենը թող ինքն իր համար հայտնագործի: Մեկի համար՝ անհաս գագաթ, մյուսի համար՝ սարսափի վիհ...»:
Գագիկ ԳԻՆՈՍՅԱՆ



Չոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

Մայիսի 22-ին ֆրանսահայ նշանավոր երգիչ, շանսոնիե, երգահան, բանաստեղծ, գրող, կինոդերասան և հասարակական գործիչ Շառլ Ազնավուրը (Վաղինակ Միքայելի Ազնավուրյան) կդառնար 100 տարեկան, սակայն 2018-ին հոկտեմբերի 1-ին Մեծ հայրը կնքեց մահկանացուն: Մայիսի 22-ին է ծնվել նաև ռազմական գործիչ, 33 ՉՈՒ գեներալ-մայոր, Արցախյան ազատամարտի լեգենդար հրամանատարներից, Հայաստանի և Արցախի ազգային հերոս Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդորը: 2021թ. մարտի 31-ին 82-ամյա գեներալի՝ Շուշիի ազատագրողի սիրտը չդիմացավ: Արցախյան 44-օրյա պատերազմում կրած պարտությունը շա-

տերի վրա ծանր ազդեցություն թողեց: Մեծ հայերի ծննդյան օրը Երևանի Պեյո Յավորովի անվան թիվ 131 հիմնական դպրոցում կայացավ ցերեկույթ՝ նվիրված հայ ազգագրական պարերի մասնագետ, հասարակական գործիչ, արցախյան պատերազմի մասնակից Գագիկ Գինոսյանի հիշատակին ու Նժդեհյան գաղափարախոսությանը: «Ոգի-գաղափար-ինքնություն» խորագիրը կրող ցերեկույթը նախածեռնվել և կազմակերպել էր նույն դպրոցի ազգագրական պարերի ուսուցչուհի Չեփյուր

ՉՑ

60

մույթը: Հայ պարարվեստի նվիրյալը նաև ռազմական գործիչ է, եղել է Լեոնիդ Ազգալոյանի ջոկատի անդամ, անցել մարտական ճանապարհ: Գագիկը հաճախ էր այցելում Զաչաթաղ: 2017 թ. մարտի 19-ին «Գուրգեն Մելիքյանի՝ Զաչաթաղի բազմազգակ ընտանիքների հիմնադրամ»-ի կողմից, հիմնադրամի նախագահ Գ. Մելիքյանի նախաձեռնությամբ հիմնվեց Լեոնիդ Ազգալոյանին նվիրված պուրակը: Ծառատունկին, բացի ԵՊՀ ռեկտորից, դասախոսներից, ուսանողներից, մասնակցում էր նաև «Կարին» համույթը՝ Գ. Գինոսյանի ղեկավարությամբ: «Կարին»-ի տղաները, նրանց շարքում նաև 2020 թ. պատերազմի հերոս-նահատակ Հարություն Ստեփանյանը, յուրաքանչյուր տնկի հողին հանձնելիս հանդես էին գալիս ռազմական պարով: Նրանց էին միանում ուսանողները, բերծորցի աշակերտները, և արդեն պարային շրթան մեծ տարածք էր բռնում: Այդպիսի միջավայրում կայացավ ժողովրդի կողմից դեռ իր կենդանության օրոք հերոս հռչակված Լեոնիդ Ազգալոյանի 75 ամյակին նվիրված պուրակի հիմնումը: Ընթացքում լուսանկարում էի, հիանում հայոց պարով: Չրուցեցի Գագի-



կի հետ, ով սիրով խոսեց Լեոնիդի ու Արցախյան գոյամարտի նվիրյալների մասին: Ասաց. «Սիրով մասնակցում եմք ծառատունկին և հիանում ու զարմանում Գուրգեն Մելիքյանի եռանդով. նրա աստծոհաճո առաքելությամբ: Ազատագրական բանակի հրամանատարին նվիրված պուրակի հիմնարկեցին այստեղ եմք: Բացի ընդհանուր

ՉՑ

70

Դովլաթյանը՝ տնօրինության, ուսուցիչների ու աշակերտների աշակցության: Ներկա էին Գագիկ Գինոսյանի հարազատները, ընկերները, մտերիները, արվեստագետները, զինվորականները, դպրոցի ուսուցիչները, աշակերտները, հյուրերը: Դպրոցի դահլիճի բեմի աջ կողմում Նժդեհի ու Անդրանիկի, Արցախյան առաջին գոյապայքարում ու 44-օրյա պատերազմում նահատակված Անմահ հերոսների լուսանկարներով պատահա էր՝ «Ողջույն, տղերք» վերնագրով: Տղերքի կողքին պատվուպահակ էին կանգնել, Ապագա զինվոր» դպրոցի (ղեկավար՝ Սամսոն Մուրադյան) սաները:

Ձախ անկյունում Նժդեհի ու Գագիկ Գինոսյանի նկարներն էին՝ ներքևում «Ոգի-գաղափար-ինքնություն» խոսքը: Յերեկույթը, Շառլ Ազնավուրի մասին ներկայացնելով, բացեց դպրոցի ուսմասվար Մարիամ Ոսկանյանը: Կարևորեց Ֆրանսիայի մայրաքաղաքում ծնված մեծ երգչի դերը հայ ժողովրդի ներկայացման գործում: Իր մահից հետո էլ Ազնավուրը պատմում է հայերի մասին: Եթե Ազնավուրը մշակույթի գործիչ էր, ապա Կոմախուսը մեր մասին աշխարհին ներկայացրեց իր ռազմական տաղանդով: Թիֆլիսում ծնված հայրորդին չէր կարող անմասն մնալ Արցախյան գոյամարտից, ու նրա հրամանատարությամբ հայ ռազմիկները շատ սիրուններ գործեցին՝ Շուշիի ազատագրումը՝ մեծ օրինակ: Ներկայացնելով նաև ռազմական մեծ տաղանդի տեր գործչին՝ Մ. Ոսկանյանը բարձրաձայնեց նաև իրենց կրթօջախի այն սաների անունները, ովքեր դարձել էին Հայոց բանակի զինվոր ու նահատակվեցին 44-օրյա ընթացքում: Դպրոցի տնօրեն Նաիրա Չաքարյանը, ողջունելով ներկաներին, նույնպես խոսեց հայի իսկական արժեքամակարգի տեր մարդկանց մասին: Ելեց՝ իր ղեկավարած կրթօջախում հաճախ են նման հանդեսներ կայանում, և հայրենակներ այս սովորույթը գալիս է դպրոցի հիմնավորման սկզբից՝ 1963 թվականից: Հավելեց՝ 1988-2017 թվականներին դպրոցը ղեկավարել է իր ուսուցիչը՝ ստեղծագործող մանկավարժ Գրիգոր Ռուբենի Սաֆարյանը, ում ազդեցությունը շարունակվում է: Շնորհակալություն հայտնեց ներկաներին ու ցերեկույթի կազմակերպիչներին, որ օրեր շարունակ աշխատել են՝ հայոց ոգին Նժդեհյան գաղափարն ու մեր ինքնությունը ներկայացնելու համար: Այնուհետև դահլիճ մտան դպրոցի սաները՝ վառվող մոմերը Նժդեհի ու Գ. Գինոսյանի մեծադիր նկարների տակ տեղադրելով: Ու մոտ 2 ժամ դահլիճի բեմում նրանք էին՝ հանդես գալով հայկական ազգագրական ու ռազմահայրենասիրական երգ ու պարով: Մի պահ նրանց միացավ նաև Գուսան Հայկազունը, երբ հնչեց նրա հեղինակած երգերից մեկը: Պարային գեղեցիկ կատարումներով հանդես եկավ նաև դպրոցի ուսուցչուհիների պարախումբը: Աշակերտները ներկայացրեցին նաև Գ. Գինոսյանի կենսագրական տվյալներ:

Շվեյտլե Է 1966 թ. օգոստոսի 3-ին Ջավախքի Ախալցխա քաղաքում: 1972-1982 թթ. սովորել և ավարտել է Ախալցխայի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 1990 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Տեխնիկական կիբեռնետիկա» ֆակուլտետը: Եղել է «Վան» և «Ակունք» ազգագրական համույթների կազմում: Արմատներով լինելով Կարին քաղաքից՝ հիմնել է «Կարին» ավանդական երգ ու պարի խումբը՝ ղեկավարելով այն մինչև 2024 թ. փետրվարի 6-ը, երբ նրա սիրուն էլ չղիմացավ հայրենիքի ծանր կորուստների բեռին: 1985-1987 թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակում: Մասնակցել է Արցախյան պատերազմին: Եղել է Լեոնիդ Ազգալոյանի հրամանատարությամբ գործող «Ազատագրական բանակ» ջոկատի զինվոր: Ներկայացվեց նաև 1942 թ. Նոյեմբերի 22-ին Թիֆլիսում ծնված ֆիզիկոս, ռազմական գործիչ, Արցախյան ազատամարտի մասնակից, Արցախի հերոս

Լեոնիդ Ազգալոյանը, ով 1990 թվականի փետրվարից վարել է «Անկախության բանակ» ռազմաքաղաքական կառույցի հրամանատարությունը: 1991 թվականի հունիսին Հոլմսի Հոլմսի-Կյանի հետ կազմավորել է «Ազատագրական բանակ»-ը, որի գլխավոր հրամանատարը մնաց մինչև իր կյանքի վերջը: 1992 թվականի հունիսի 21-ին Լեոնիդը նահատակվեց Մարտակերտի շրջանում՝ Տոնաշեն գյուղի մոտ: Նժդեհյան գաղափարակիր Գ. Գինոսյանն սպայի կոչումով 1994 թվականից ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2001-2008 թթ. աշխատել է Պեյր Յավրոպի անվան թիվ 131 միջնակարգ դպրոցում որպես զինղեկ: Մասնակցել է նաև 2020 թ. 44-օրյա պատերազմին:

Ցերեկույթի մասնակից, ճանաչված օպերային երգիչ Վահրամ Թադևոսյանը՝ Վանո Թադևոս, հանդես եկավ Շառլ Ազնավուրի երգերի կատարումով՝ նվիրված Արցախյան գոյամարտերում նահատակված բոլոր քաջորդիների ու Գ. Գինոսյանի, Սկրտիչ Մկրտչյանի՝ Մակիչի, Սահակ Սահակյանի և խաղաղ օրերին վախճանված մշակույթային ու ռազմական գործիչների հիշատակին: Երգիչ Արսեն Համբարյանը հանդես եկավ Նժդեհին նվիրված իր հեղինակած երգերով: Ընթացքում եղան նաև ելույթներ ներկա արվեստագետների կողմից: Երգիչ Դավիթ Ամալյանը, ում Վարդան որդին նույնպես նահատակվեց 44-օրյա պատերազմում՝ Շուշիի մատույցներում, կարևորեց նման հանդեսները՝ հայտնելով շնորհակալություն կազմակերպիչներին ու դպրոցի սաներին, որ կարողացան ընթացքում ոգևորել հանդիսատեսին: Ցերեկույթի կայացումը բարձր գնահատեցին գրող Կրեժ Սարուխանյանը, «Մարաթուկ» համույթի գեղարվեստական ղեկավար Երվանդ Թորոսյանը, Գագիկ Գինոսյանի դուստրը՝ Անի Գինոսյանը: Ազգագրական, ժողովրդական ու ռազմահայրենասիրական երգերի հրաշալի կատարող, երգչուհի Գոհար Հովհաննիսյանը ողջունեց ցերեկույթը և դպրոցի սաների հետ երգեց ազգագրական երգերի շարան, հայտնեց շնորհակալություն կայացած ցերեկույթի և կատարված աշխատանքի համար: «Ակունք» համույթի երգչուհի Աննա Թովմասյանը հանդես եկավ օրորոցային երգի կատարումով: «Մասունք»-ի խմբից Տիգրանը նույնպես անմասն մնաց. մեծ էր ոգևորությունը, և դպրոցի սաների հետ «Յարիսուշտա» էր պարում: Հյուրերից Ռոման Բալայանը դպրոցին նվիրեց Շառլ Ազնավուրի և Գարեգին Նժդեհի նկարները և շնորհակալություն հայտնեց Նժդեհյան ոգով կայացած ցերեկույթի համար: Ցերեկույթին ներկա էին նաև «Հանուն հայրենիքի» հասարակական կազմակերպության նախագահ Ներսես Ներսեսյանը և անդամ Վարդիմիր Նիկողոսյանը: Ն. Ներսիսյանը բարձր գնահատեց կազմակերպիչների աշխատանքը և իր ղեկավարած ՀԿ-ի կողմից 2. Դովլաթյանին հանձնեց պատվոգիր, որում գրված է. «Հանուն հայրենիքի ՀԿ-ն, բարձր գնահատելով Երևանի Պեյր Յավրոպի անվան թիվ 131 հիմնական դպրոցի սաներին ազգագրական երգի ու պարի միջոցով Նժդեհի ու Մանուկ Աբեղյանի հարախոսության հետ հաղորդակից դարձնելու պարունույց Չեփյուռ Դովլաթյանի անմնացորդ ջանքերը, նրան նվիրում է Լեռնահայաստանի սպարապետ Գարեգին Նժդեհի կիսանդրին: Համոզված եմ, որ հավատարիմ մնալով մեր նախնիների բնապաշտական աշխարհընկալումներին և Նժդեհի վեհ գաղափարներին՝ մենք միասնական ուժերով կընթանանք դեպի հայ ժողովրդի վերջնական հաղթանակ՝ մեր կորուսյալ Հայրենիքի վերատիրման ու ամբողջական Հայաստանի վերակերտման բաղձալի նպատակի իրականացում»: Արդեն մի քանի անգամ ներկա եմ եղել այս կրթօջախում կայացած տարբեր միջոցառումների, և կա մի ընդհանրություն՝ հայրենասիրություն, մատաղ սերնդի ճիշտ դաստիարակություն:

70

ծառատունկից, մեր տնկիներից մեկը նվիրված է Լեոնիդի ուսանողական ու մարտական ընկեր Ալեքսանդր Թամանյան-Կրոստերի հիշատակին: Մի ծառ էլ տնկել ենք մեր խմբի՝ «Կարին»-ի անունով: Նույն օրը եղավ այցելություն նաև Մոնթեռին նվիրված պուրակ, որտեղ նաև կար հուշաքար՝ մեծ հրամանատարի՝ «Եթե կորցնենք Արցախը, կչրջենք մեր պատմության վերջին էջը» զգուշացնող խոսքը:

2022-ի ապրիլի 24-ին Սպիտակավոր եկեղեցու բակում՝ Նժդեհի շիրմաքարի մոտ Գագիկը ներկայացրեց Մեծ հային: Եղավ խոնարհման ու ինկարկման, երդման արարողություն: Երևանում էլ ներկա եմ եղել Գագիկ Գինոսյանի կազմակերպմամբ կամ մասնակցությամբ տարբեր միջոցառումներ ու միշտ հպարտացել՝ ունենք նման ազգային գործիչ: Վերջին անգամ նրան հանդիպեցի այս տարի՝ հունվարին, Սուրբ Աննա եկեղեցու բակում՝ դարձյալ պարելիս՝ ժպիտը դեմքին ու հպարտ: Միշտ այդպես եմ հիշելու Գագիկ Գինոսյանին:

Հզոր ու արմատներով կաղնի է նաև Գագիկը, և ինչպես առակում է ասված՝ հազար տարի էլ պառկած կգոյատևի՝ հավերժ է մնալու ազգայինը:

2ոհրաք ԸՈՔՈՅԱԼ

Հայերի հիմնական ողբերգությունը՝ օտարների նկրկամոռաց նվիրվածությամբ ծառայելու մեջ է: Ֆրիտյոֆ ՆԱՆՍԵՆ

ԴՈՒ ԵՍ ԶՈՒՅԱԸ

19-րդ դարում խոշոր տերությունների ու արդեն կազմավորված միջազգային կառույցների կողմից հաճախ էր հնչում «Յայկական հարց» եզրույթը, որով փորձ էր արվում զսպելու Օսմանյան կայսրությանը: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ 20-րդ դարում ու այսօր նույն երևույթն է իրականանում: Այսօր գերված է Արցախը. հայաթափ է: Վտանգված են Յայաստանի Յանրապետությունը սահմանները, հայոց պետականությունը: Միջազգային կառույցներն ու խոշոր տերությունները դարձյալ կողքից են նայում, և եթե արվում է փորձ՝ ի նպաստ մեր ժողովրդի, ձևական է, պարզապես մեր ցավն օգտագործվում է ի շահ կարևոր դերակատարների: Թուրքիան ու Ադրբեջանը որևէ կորուստ չեն ունենում:

Իսկ ո՞րն է մեր ժողովրդի անելիքը, որ կարողանանք դիմակայել արտաքին ճնշումներին, ներքին անկազմակերպվածությանը: Առաջնայինը հայոց դպրոցն է, որտեղ հայ երեխան, բացի հանրակրթական գիտելիք ստանալուց, կարևորի իր դերը երկրի, հայրենիքի, պետության, ազգի գոյատևման հարցում: Միշտ են երագել՝ լինել այնպիսի աշխարհ, որ գենք բառը միայն հնչելը որպես անցյալի երևույթ: Բայց այլ է իրողությունը, և պարտավոր ենք ազգովի լինել նաև ՉԽՆԿՈՐ: 19-րդ դարում էլ մեր ժողովուրդը, թե Օսմանյան կայսրության, և թե Ռուսական կայսրության ներքո ստիպված էին նաև գենք կրել: Առավել դժվար էր արևմտահայության վիճակը, ու պատահական չէ, որ սկսվեց հայրուկային շարժումը, և խաղաղ հողագործն ու ատաղձագործը, ուսուցիչն ու աշակերտը դարձան հայրուկ՝ պաշտպանելու ժողովրդին: Այսօր մեր դպրոցներում պետք է առավել ներկայացվի հատկապես այդ իրադարձությունների, դրանց կողմնակից մասին:

Մեծ հայրենականի հերոսների մասին չպետք է մոռանանք: Յաճախ են հնչում համաշխարհային այդ պատերազմին մասնակիցների մասին քննադատական խոսքեր. «...Ում համար էին կռվում» և այլն: Արցախյան գոյամարտում մենք հաղթեցինք, ունեցանք ազատագրված հայրենիք: Յազարավոր քաջորդիների շնորհիվ եղավ այդ ձեռքբերումը: Յազարավոր Մարտիրոս-Նահատակներ, որ բռնեցին Ամմահուլայան ճամփան: Չմոռանանք նրանց, ցերեկույթներ ու այլ արարողություններ իրականացնենք դպրոցներում, որ հայ մանուկը ճանաչի իր հերոսին: 2016, 2020 թվականների Զառոյա ու 44-օրյա պատերազմներում, դրանից հետո դարձյալ ունեցանք հազարավոր Մարտիրոս-Նահատակներ, հաշմանդամներ: Առավել ցավ է, որ կորցրեցինք նաև Արցախը, հայրենիքի այլ տարածքներ: Արցախ անունը և հայրենիքի այս հատվածի հետ կապված Ամմահ հերոսների անունները պետք է՝ որպես անշեշ հուր, անթղթված լինի բոլորիս սրտերում: Չմոռանանք նաև ողջ մնացած հերոսներին: «Յայաստանի Յանրապետություն» թերթի էլեկտրոնային էջերում պարբերաբար կներկայացնենք Յայ հայրուկային շարժման առաջամարտիկների, Մեծ Յայրենականում հերոսացած հայորդիների, ինչպես նաև Արցախյան բոլոր պատերազմներում ու Յայոց սահմանը պաշտպանելիս Ամմահուլայան ճամփան բռնած հերոսների մասին:

ԱՌԱՋԻՆ ՅԱՅԴՈՒԿՆԵՐԻՑ ԱՐԱՔՈՆ



Յայ հայրուկային-ֆիդայական շարժումը հիմնականում ձևավորվեց 19-րդ դարի 80-ական թվականներից և շարունակվեց մինչև 20-րդ դարի առաջին 2 տասնամյակները: Խնդիրն էր պաշտպանել հայ բնակչությանը թուրք հարստահարիչների ոտնձգություններից, վրեժխնդիր լինել նրանց կամայականությունների



ու չարագործություններին զոհ դարձող արևմտահայ աշխատավորի համար: Յայ հայրուկային առաջին խմբերն առաջացել են Տարոնում, Վասպուրականում, Կեսարիայում և Արևմտյան Յայաստանի այլ վայրերում: Առավել հայտնի էին Մարգար Վարժապետի, Արաբոյի, Ռ. Շիշմանյանի (Դերսիմի քեռի), Գ. Արխանյանի (Մեծուրի Առյուծ), Ա. Աչքբեյաշյանի, Մինասոյուն խմբերը, Մեծ և Փոքր «Զելուները» և ուրիշներ: Այդ ժամանակվա առավել հայտնի ֆիդայիներից է Արաբոն՝ Ստեփանոս Մխիթարյանը, ով ուղեկիշ դարձավ հայ ազգային ազատագրական շարժման մասնակից բազում այլ ֆիդայիների: Ծնվել է 1863 թ. Արևմտյան Յայաստանում՝ այդ ժամանակ արդեն Օսմանյան կայսրության Երզրումի վիլայեթի Կուռթեր գյուղում: Մշո Սուրբ Առաքելոց վանքում շատ հայրուկներ են կրթվել: Նրանց շարքում է նաև Արաբոն: Ժամանակներն ստիպում էին, որ դեռևս պատանի հայրենիքի փրկության համար կյանքը նվիրեն շատերը: Արաբոն իր նման նվիրյալներից կազմել է ինքնապաշտպանական զինված խումբ և դիմակայել հայ բնակչությանն սպառնացող թուրքական իշխանություններին, քողերին: Նրա խմբում էին Ալիզանյանի Լևոնը, Գուրգենի Յովիկը, Գալստյի Մանուկը, Բերդակի Ներսուն, Միս Շահենը, Ղարսեցի Յակեն, Գևորգ Չավուշը: Խումբն սկզբնական շրջանում հիմնականում գործել է Սասունում ու Տարոնում:

1882 թ. Արաբոն Բերդակ գյուղում ձեռքբերվել է թուրք իշխանությունների կողմից և դատապարտվել 15 տարվա տաժանակիր աշխատանքի: Սակայն կարողացել է փախչել Բիթլիս քաղաքի բանտից ու շարունակել պայքարը հայ ժողովրդին կեղեքողների դեմ: Մուշում կազմակերպել և գլխավորել է հայկական առաջին հայրուկային խմբերից մեկը: 1889 թվականից սկսած՝ բազմիցս այցելել է Կովկաս: 1892 թվականին Թիֆլիսում մասնակցել է ՅՅԴ կուսակցության 1-ին ընդհանուր ժողովին: 1893-ի գարնանը 16 հոգանոց լավ զինված խմբով Արաբոն, Սասունի ապստամբներին օգնելու նպատակով, Կարսի մարզից անցնում է ռուս-թուրքական սահմանը՝ ուղղություն վերցնելով Խնուս-Մուշ: Ծանապարհին՝ Ղոզլուի սարերի մեջ քրդերի հետ կռվի ժամանակ սպանվում է Արաբոյի զինակից Ալիզանյանի Լևոնը: Արաբոն իր հետ վերցնելով իր ընկերներից հինգ հոգի, քրդի տարագով շարունակում է ճանապարհը դեպի Մուշ, բայց Գյալառաջի ձորում՝ Մուշի և Խնուսի միջև, դարձյալ բախվում է քրդերի հետ: Կռվում սպանվում են Արաբոյի զինակիցներ Բուլղարը, Խնուսցի Մելքոնը, Մշեցի Ավոն և Մարտոն: Արաբոն և Ախալցխացի Վարդանը մեծ քաջություն են դրսևորում, բայց նրանց բոլոր ջանքերը՝ ճեղքելու թշնամու օղակն ու հասնելու հանդիպակաց լեռները՝ անցնում են ապարդյուն: Արաբոն և Վարդանը նույնպես զոհվում են այդ կռվում: Իր սիրելի հերոսին հայ ժողովուրդը երգեր է նվիրել:

ԱՐԱՔՈՆ

Արաբոն ընկել էր կռվում քաջարի, Գնա՛նք հայեր, գնանք ընդդեմ թուրքերի, Մարութա լեռների առյուծն էր ընկել, Վրեժը մեր սրտում գնա՛նք թուրքի դեմ: Արաբո, Արաբո քա՛ջ ֆիդայապետ, Գնա՛նք հայեր գնանք կռվենք թուրքի դեմ: Արցունքոտ աչքերով կռվում են տղերք, Շուն թուրքերի սրտում խրում են սրեր,

Ընկավ ազգի հերոս քաջ ֆիդայայապետ, Կրեժր մեր սրտում գնա՛նք թուրքի դեմ: Մեր Հայոց լեռներում անդորրեր ընկել, Էլ չի հնչում երգը, հայրուկի պարը, Ֆիդայու աչքերում արցունք էր ընկել, Ավա՛ր, Արաբոյի արյուն էր հեղվել:

ՊՈՌՇԱԼՑԻՆԵՐԸ

Արցախյան գոյամարտի տարիներին՝ 1989-94 թվականներին, հազարավոր հայորդիներ զինվորագրվեցին հայրենի Արցախի ազատագրման ու պաշտպանության մարտերին, նորանկախ Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությանը: Այս պատերազմում հաղթեցինք, ու աշխարհը ճանաչեց հային: Ինչ խոսք՝ պատերազմներում շատ են լինում նաև մարդկային կորուստներ: Հազարավոր քաջորդիներ բռնեցին Անմահության ճանապարհը ու դարձան ազգի պարծանքը: Նրանցից է Պռոշյանցի Պետոն՝ Պետրոս Ղևոնդյանը, ով անցավ ռազմական մեծ ճանապարհ ու մարտիրոսվեց 30 տարի առաջ՝ 1994 թ. փետրվարի 14-ին Զարվաճառում: Ծնվել է 1964 թ. հունվարի 30-ին ՀԽՍՀ Աշտարակի շրջանի Տեղեր գյուղում: 1981-ին ավարտել է Պռոշյանի միջնակարգ դպրոցը, որն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Երևանի թիվ 18 պրոֆտեխնուսումնարանում: 1982-84 թթ. ծառայել է խորհրդային բանակում (Բլազովեչենսկ քաղաքում): Չորացրվելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետը: 1988 թ. սկզբված Արցախյան շարժումը նաև շատ ուսանողների ոտքի հանեց: Երբ պարզ դարձավ՝ միայն զենքով է լինելու Արցախի ազատագրումը, նույն ուսանողներից ևս մտան կազմավորվող մարտական ջոկատների մեջ ու դարձան զինվոր: Պետոն էլ 1989 թվականից արդեն զինվոր էր և մասնակից ՀՀ սահմանամերձ գյուղերի ինքնապաշտպանությանը, այնուհետև նրա մարտական ուղին անցավ Արցախի Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու և Հարրուբի շրջաններում: Մեծ գործ է կատարել հատկապես Զարվաճառի թշնամական հենակետերի ոչնչացման ռազմագործողությաններում: 1992 թ. նոյեմբերի 1-ին կազմավորվեց Շուշիի առանձնակի գումարտակը, որի հրամանատարի տեղակալ նշանակվեց Պետոն: 1993 թ. հունվարին Սրիխավենդում նա ԻԳԼԱ-ով խփեց թշնամու գերծայնային «Միգ-25» ինքնաթիռը, ինչի համար Արցախի բանակից ստացած գումարը փոխանցեց զոհված ընկերների ընտանիքներին: 1994 թ. փետրվարի 14-ին Պետոն ընկերների հետ իջել էր Օմարի լեռներից: Այդ օրը Զարվաճառի շրջանի Եղեգնուտ գյուղի մոտ մարտի դաշտում վիրավոր զինվոր էր միայնակ մնացել: Շտապօգնության մեքենան առաջ չէր շարժվել. թշնամին ակնասպառել էր ճանապարհը: Պետոն, գիտակցելով՝ հնարավոր է լինի պայթյուն, այնուամենայնիվ չէր կարող երիտասարդ զինվորին թողնել անօգնական և ինքն է նստում շտապօգնության մեքենայի դեկին, դուրս բերում վիրավոր զինվորին: Սակայն տեղի է ունենում սպասված պայթյունը, և զոհվում է հրամանատար Պետոն՝ դառնալով հերոսացման մարմնացում: Կիրավոր զինվորը ստեփանակերտցի Արմեն Մարտիրոսյանն էր, ով երկար տարիներ, մինչև 2023 թ. աշխատում էր զինվել Ստեփանակերտի դպրոցներում: Նա իր որդուն անվանակոչել է Պետրոս: Պետրոս Ղևոնդյանի անունն էին կրում Արցախի նոր Շահումյանի (Զարվաճառի) Եղեգնուտ գյուղի և հարազատ Պռոշյանի դպրոցները: 2010 թվականի ապրիլի 10-ին Զառաթաղի շրջանի Տիգրանավան գյուղի միջնակարգ դպրոցում կայացավ մեծ միջոցառում, և կրթօջախն անվանակոչվեց Պետրոս Ղևոնդյանի անվամբ: 2007 թ. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում, որտեղ սովորել է Պետրոսը, նրա անունը կրող լսարան է բացվել: 1994 թ. լույս է տեսել Համլետ Գևորգյանի «Պետոն» գիրքը: 1996 թ. Պետոյին հետմահու շնորհվել է ԼՂՀ ՊԲ մայրոքի կոչում: 2001 թ. Պետրոս Ղևոնդյանին շնորհվել է Արցախի հերոսի կոչում: Պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի և «Ոսկե արծիվ» շքանշաններով: Նրա անունով երգ նույնպես կա.

*Ղևոնդ Պետոն. մեծ երամիկ
Մի նոր արծիվ միացավ,
Փա՛ռք քեզ, Պետո, Փա՛ռք երամիկ.
Հայոց սրտերն դառնացան:*

Պռոշյան գյուղի Չորաց զինվորական պանթեոնը, որտեղ հուղարկվորված է Պետոն և գյուղից Արցախյան բոլոր պատերազմներում նահատակված մոտ 30 քաջորդիներ, յուրահատուկ սրբավայր է դարձել:

*Կարոտին կարոտ մնացինք
Մոռվ լեռան լանջին ու անպեր պատեց,
Արցախ գավառ յուր որդիների կանչեց,
Նրանց թվում զնաց կռվի դաշտ արևոտ
Դաշնակցական խենթն էր, անուռը՝ Կարոտ:*

Պետոյի մարտական ընկերներից էր Արցախյան գոյամարտի առաջին շրջանում Ջամբազի արծիվ մարտական անունն ստացած Կարոտ Հովհաննեսի Մկրտչյանը: Պռոշյանի դաշնակցական ջոկատների ընդհանուր հրամանատար, «ԼՂՀ մարտական խաչ 1 աստիճանի շքանշան, ՀՀ Մարտական խաչ երկրորդ» աստիճանի շքանշանի ասպետ Կարոտի հուշարձանը կանգուն՝ Պռոշյան գյուղի մշակույթի պալատի մոտ: 1992 թվականից մինչ օրս անհայտ ճակատագրի արժանացած հերոսը ծնվել է 1964 թ. փետրվարի 19-ին Սիրիայում: 1965 թ. դեկտեմբերի 22-ին նրանց 4 զավակ ունեցող ընտանիքը տեղափոխվել է Հայաստան: Կարոտը հասակ է առել Պռոշյան գյուղում: Պատանի հասակում զբաղվել է ըմբշամարտով: Պռոշյանի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտ: Առաջին կուրսն ավարտելուց հետո, զորակոչվում է խորհրդային միության բանակ:



1985 թ. բանակից վերադարձել է բազմաթիվ շնորհակալագրերով ու պատվոգրերով: 1989 թ. ավարտել է ուսումը՝ ստանալով ինժեներ-մեխանիկի որակավորում: Արցախյան շարժման հենց սկզբից նվիրվել է Հայաստանի սահմանների պաշտպանությանը և Արցախի գոյապայքարին: 1989-ից եղել է Պռոշյանի դաշնակցական ջոկատների ընդհանուր հրամանատարը: 1990 թ. աշնանը Կարոտի խումբը, Նոյեմբերյան-Շամշադին գծից վերադառնալով, մեկնում է Հյուսիսային Արցախ, ուր Շահեն Մեղրյանի հրամանատարությամբ համալրում է Շահումյանի պաշտպանական ուժերը: Չենք-գիտամթերքի հայթայթումից զատ, Կարոտն իր ընկերների՝ Պետոյի և Հրաչի հետ միասին, շրջանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար կարճ ժամանակում տեղացի ուժերից ստեղծում էր նոր մարտական խմբեր, սովորեցնում նրանց զենքի ու մարտարվեստի ներությունները: 1991 թ. ապրիլի 18-ին Պռոշյանի, Բաղրամյանի, Հրազդանի ջոկատները միանում են Գետաշենի՝ Թաթուլ Կրպեյանի հրամանատարության տակ գտնվող խմբերին: Կարոտի խումբը տեղափոխվում է Մարտունաշենի դիրքեր՝ համալրելու Սիմոն Աչիգոյանի հրամանատարությամբ գործող ջոկատը: Այդ օրերին հատկապես մեծ արձագանք գտավ 1991 թ. ապրիլի 30-ին «Օղակ» 1-ին գործողության ժամանակ Սիմոն Աչիգոյանի և «Արաբ» ջոկատի համագործակցությամբ Կարոտի առաջնորդած ազատամարտիկների մղած կռիվը Մարտունաշենում՝ խորհրդային բանակի զինվորների և ադրբեջանական ՕՍՄԼ-ի դեմ: 1991 թ. Կարոտը նշանակվեց Ստեփանակերտի՝ Աշոտ Ղուլյանի 1-ին վաշտի, գրոհային դասակի հրամանատար: Կարոտի խումբը մասնակցեց Լեւոնոյի և Խոջալուի ազատագրմանը, ինչպես նաև Ումուդլուի, Փարուխի և Մալիբեյլիի մարտերին:

1992 թ. մայիսի սկզբին Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարության և անձամբ Շահեն Մեղրյանի պահանջով Պռոշյանի ջոկատը ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանից ստանում է զենք ու հրաման և ուղղաթիռով Կարոտի և Պետոյի հրամանատարությամբ մեկնում Շահումյան: Տեղի ինքնապաշտպանական խմբերի համագործակցությամբ ստանձնում են Բուզլուխի պաշտպանությունը: Չնայած Կարոտը շատ էր ցանկանում մասնակցել Շուշիի ազատագրման մարտերին, բայց ասում էր. «Տարբերություն չկա, թող մեր ընկերներն ազատագրեն Շուշին, իսկ մենք՝ Գետաշենն ու Մարտունաշենը: Մինչև Գետաշենն ու Մարտունաշենը չազատագրենք, ես Ղարաբաղից տուն չեմ վերադառնա»: Պռոշյանցի մարտիկները դիրքեր են գրավում Ջամբազի լեռնագագաթի 29-րդ հենակետում, որտեղ էլ Կարոտն ստացավ Արծիվ անունը: Մի քանի օր անց նրանց էլ

103

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՖԵԼԻԵՏՈՆ

ՅԵՔԻԱԹ ԾԱՅԾԻ ՓՈՍՈՒՄ ԸՆԿԱԾ ՀԻՄԱՐԻ ՄԱՍԻՆ

Յեքիաթը հրապարակվել է Հոլանդահայ նկարիչ Alik Assatrian-ի «ՎԵՐԼԱՏՈՒՆ-22»-ի անձնական նախագծում, որտեղ առաջադրված էր պարտադիր կիրառել՝ Երազ, Ագռավ, Գաթա, Ձիավոր Սուրհանդակ, Փերի, Համբույր, Կամուրջ, Օձ, Հրեշ, Մեր, Աստված, Սիրտ, Երկինք, Ավանակ, Հավատ, Տոտիկ, Գինի, Համարձակություն, Կաղին, Շեփոր և Արահետ բառերը:



Ես երկինքը վկա՝ լինում է չի լինում, մի հեր ու տղա են լինում: Յերը՝ իբր խելոց, բայց տղան հիմար մեռնում էր, իսկը ավանակ որ կար: Հոր մտքով անցնում էր, որ երկի իրեն է քաշել, բայց ոնց քցում բռնում էր, իրեն համոզում էր, որ ախրը ինքը գոնե մազաչափ խելք ունի ու դրանով հսկա երկրի վարչապետ է եղել, տղան ախրը չափից դուս էր հիմար: Մեկ մեկ էլ իրեն հանկուտացնելու համար նույնիսկ բարձր ծայրով հենց իրենից հաշիվ էր պահանջում՝

– Այ քեզ, չար երազ, ես էշ օղի ավանակ գաղեն հենց իմ որդի՞ն պետք է լիներ:

Բայց դե եղածը եղած էր, Աստված բուրդին իրենց սրտով արդեն տվել պրծել էր, դարդ անել պետք չէր, պետք էր համակերպվել ու մի բան մտածել:

Ես խելոց հերը որոշում է, որ իր որդուն էս էշ վիճակից մանրից հանի՝ դե մարաղ մտած էլի: Ու գործի է անցնում: Մուղամով, տոտիկ-տոտիկ սովորեցնում է սովորելը, հետն էլ աշխատեցնել է սովորեցնում: Դա է անում, քանի որ գիտեր՝ մտքով անցնում էր, որ վաղը մյուս օրը ես փուչ աշխարհում մեռնել՝ չթաղվել կա, ու իրեն փոխարինող է պետք: Բացի դա՝ Ես մարդու կարևոր գործը այս երկրում դա էր՝ մտածում է ոչ-խար ժողովրդի հերն էլ անիծած: Կարևորը իր միևնույն օրդին էս հայ Գիբորի օրը չնկնի՝ մարդ դառնա, աշխատանք անի ու վաղը չէ մյուս օրն էլ ինքը Համբույրի օրը չնկնի, այլ համարձակություն ունենա գոնե իր ձեռքով պաշտոնի դիմ նրան: Դե իր անբախտով տանի, տանի ու դարձնի սուլթան էլի: Հիմա կասեք ոնց՝ սուլթան, թան էլ չէ բռթաց մածու՞ն: Հա, հա, հավատացե՛ք, եղ տեսակ

երկրներում նման բաներ լինում են՝ հորից հետո տղան է գալիս ու սուլթան սատում, տղայից հետո՝ սրա տղան ու երպես շարունակ՝ պտուղող կարուսեղը քեզ օրինակ: Ես ամենը հասկանալով հայրը խելք է ուզում սովորեցնել տղային: Քանի որ խելքն էլ հենց եղպես Աստված էր տեսակ ազգերին չի տվել, ուստի Էնքան է ես հիմար տղուն չարչարում, որ էս ավանակ գյաղեն հուսահատվում է, մի օր էլ կանգնում է, թե՛

– Հեր, էլ չեմ ուզում բան սովորեմ ու մտո՞ղ էլ մնամ, պաշտոն ունենալու համար էլ խելք պետք չի, հիմա ժամանակները փոխվել են, խելքս որն է:

Եստեղ մի րոպե ընդհատում է խոսքը ու նորից շարունակում:

– Բաժանվում գնում եմ. կամրջից անցկացրու երկրի մյուս կողմ, որտեղ քո ընկեր Դեմիրել սուլթանն է, գնամ տեսնեմ Էստեղ ինչ են անում, իմ բաժինը տուր, գնամ ջոկ կյանք անեմ, երևի մի բանի հասնեմ:

– Լա՛վ, էլ էշ էշ դուրս մի տուր – ասում է հայրը. – գնա աշխարհի տես, խելքի կգաս, կկանչենք հետ կգաս, չես գա՞ բերման կենթարկենք, հենց մեռա, վախիլ մի, կգաս տեղս կկատես:

Ես հիմար էշ գյաղեն շատ է թրև գալիս, քիչ է թրև գալիս խաղատներում հոր տված փողերը քամուն է տալիս: Բայց դե նրա համար հոգ չէր՝ քամու բերած, քամու տարած, կազիններում կրվելուց հետո էլ մի լավ թրև է գալիս գինի է խմում, օրերով հարբում ու դոդ գլուխն ու մեծ քիթը տմամբացնելով իրենից գոհ երագում: Շամանակը լինում է ձմեռ: Հետո գալիս է գարունը, ամառը, աշունը: Ես հիմար մարդը խաղում է ու հարբում, հարբում է

միանում Նոր Երզնկայի տղերը՝ Սարո Փամբուխյանի գլխավորությամբ: Շուշիի և Լաչինի գործողություններից հետո Բուզուլխ են գալիս նաև բուժականցիներ Մուրադը, Պավլիկը, Ագատն ու Ֆելիքը, բաղրամյանցի Մանվելը: Նույն օրերին նաիրցիների հարևանությամբ Ջամբազի 25-րդ հենակետում է հաստատվում Սասուն Սիմոնյանի գլխավորած ալավերցիների խումբը: Ընդհանուր հրամանատարը Կարոտն էր: Հունիսի 13-ին ազերիների և Գյանջայի (Կիրովաբադ) շրջանում տեղակայված ռուսական հատուկ նշանակության դիվիզիաներից մեկի գերագնացող ուժերի և զրահատեխնիկայի դեմ մղած անհավասար և հերոսական մարտը վերջինը եղավ Կարոտի համար: Կարոտը, գիտենալով, որ բարձունքներում արդեն թշնամու հարյուրավոր զինվորներ են, վճռում է բարձրանալ իրենց նախկին դիրքերը, և մինչ օրս անհայտ է նրա ճակատագիրը: «Կարոտն ու Պետոն իրար լրացնում էին: Նրանք ասես մեկ միասնականություն էին: Նրանց իրարից անջատել հնարավոր չէր. նույն ձև էին մտածում, նույն ձև էին գործում: Դա միայն իմ կարծիքը չէ: Այդպես են մտածում բոլոր նրանք, ովքեր ճանաչել են նրանց», – ասել է նրանց մարտական ու գաղափարական ընկեր Արմեն Գալստյանը: 2020 թ. սեպտեմբերին Նոր պատերազմ եղավ: Ու ՀՀ-ի «Կամավորական շարժում» ՀՀ գումարտակի երկրորդ վաշտի առաջին դասակը համալրված էր հիմնականում պռոշյանցի կամավորականներով: Պարտերագրի առաջին օրերից կամավորականներն արդեն Արցախում էին և մարտնչում էին Մատադիսի հատվածում:

Հոկտեմբերի 6-7-ին տեղի ունեցած ծանր մարտերում Արցախի պաշտպանության բանակի ստորաբաժանումներն և բանակի հրամանատարության ներքո գործող «Կամավորական շարժում» ՀՀ վաշտերի համատեղ գործողություններով կասեցվել է թշնամու առաջխաղացումը հյուսիսային հատվածում և կայունացվել ռազմա-ճակատի գիծը: Հետագայում հակահարձակման արդյունքում վերադարձվել է Կարանգաթաղ բարձունքը: Այն մերն էր հոկտեմբերի 7-ին, սակայն շատ թանկ գնով: Այս Հերոսամարտի ընթացքում հայ կամավորականն իր կյանքի գնով պահեց հայրենի երկրի սահմանը, և թշնամին չկարողացավ մտնել Մարտակերտ, Տոնաշեն: «Կամավորական շարժում» ՀՀ (նախագահ՝ Հրանտ Մարգարյան) գումարտակից այս մարտում նահատակվել են 28 քաջորդի, որից 20-ը՝ 2-րդ վաշտի առաջին դասակից: 17 անմահ քաջեր Պռոշյանից էին ու այսօր ննջում են հայրենի գյուղի Չորաց պանթեոնում: Եվ նրանց անունները պետք է հիշենք. Երվանդ Սահակի Թադևոսյան՝ 08.03.1974թ., Մանուկ Գագիկի Թորոսյան՝ 01.09.1958թ., Կարեն Համբարձումի Բաղայան՝ 20.02.1992թ., Արայիկ Աբրահամի Մկրտչյան՝ 06.07.1967 թ., Արշակ Տիգրանի Մելիքյան՝ 27.01.1987թ., Ալբերտ Արտեմի Խառատյան՝ 03.09.1995թ., Մանուկ Վրեժի Մարգարյան՝ 10.08.1985թ., Սուրեն Վլադիմիրի Հովսեփյան՝ 17.06.1979թ., Վիգեն Իսրայելի Մուրադյան՝ 22.05.1995 թ., Հովհաննես Անդրանիկի Պետրոսյան՝ 25.09.1996թ., Նարեկ Մետրոպի Սահակյան՝ 01.07.1994թ., Արման Արսենի Խաչատրյան՝ 01.01.1993թ., Գոռ Դավթի Մարգարյան՝ 02.02.1985թ., Ալբերտ Յուրիկի Մկրտչյան՝ 22.12.1979 թ., Գևորգ Իսկանդրի Հաղթյան՝ 11.06.1971թ., Դանիել Հակոբի Թովմայան՝ ծնվ. Սիրիա, 14.02.1963թ., Տավրոս Մխիթարի Աբրահամյան՝ 27.03.1994թ.: Նույն դասակից էին նաև անմահ հերոսներ Սուրեն Վլադիմիրի Վանցյանը՝ Երևանից, 19.02.1996թ., Զրիստափոր Անդրանիկի Արթինը՝ ծնվ. Բեյրութում, 16.01.1972թ. (հուղարկվել է Եռաբլուրում) և Աբրահամ Արտաշեսի Բարնշյանը՝ Թալինի տարածաշրջանի Արտեմի գյուղից, 22.05.1993թ.:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇՆՈՒԹՅՈՒՆ

Մեր համար ամենակարևոր հասցեն Տիգրան Մեծի 17-ը, դա Երևանի Մանկավարժական համալսարանն է:

Սհեր Ավետիսյան

2024 թվականի հունվարի 21-ին Երևանի Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում էինք հանրապետության բազմաթիվ մանկավարժների հետ:

Երեկոյի կազմակերպիչներն էին Երևանում «Ռուսական գրքի տան» հիմնադիր Սհեր Ավետիսյանը, գործադիր տնօրեն՝ Կիրակոսյանը:

Ես՝ Ասյա Չախալյանս, որպես երկար տարիների վաստակ ունեցող մանկավարժ և Լյուբերցի քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան կիրակնօրյա դպրոցի հիմնադիր ուսուցչուհի, հրավիրված էի մասնակցելու մրցանակաբաշխություն միջոցառմանը:

2023 թ. հոկտեմբերին՝ ուսուցչի օրվա կապակցությամբ, «Ռուսական գրքի տան» կողմից հանրապետության 500 ուսուցիչների մասնակցությամբ անցկացվել է Մեսրոպ Մաշտոցի անվան մրցույթ:

2024 թվականի հունվարի 21-ը մրցույթի հաղթողների պարգևատրման, ինչպես նաև վաստակավոր ուսուցիչների, վետերանների մեծարման երեկո էր:

Սհեր Ավետիսյանը երիտասարդ գործարար է, Երևանի «Ռուսական գրքի տան» հիմնադիր: Նա մտահոգված է մեր հասարակության կրթական մակարդակի բարելավմամբ, խրախուսում է ուսուցչին, որ-



պեսզի նա ավելի պարտավորված զգա բարձրացնելու կրթության, դաստիարակության որակը: Ուսուցիչը ժամանակ ու աշխատանք քիչ կծախսի, եթե լուծված են նրա ընտանիքի սոցիալական հարցերը, եթե իր երեխաները ապրում են ապահով ու բարեկեցիկ կյանքով, ուրեմն՝ լավ կընթանա նաև ուսուցման պրոցեսը: Նա ասում է դպրոցը սուրբ է, այն դպրատուն է:

Սհեր Ավետիսյանի ողջույնի խոսքը ու կոչը մանկավարժներին

– Սիրելի ուսուցիչներ, ողջունում եմ բոլորիդ և շնորհակալություն այսօրվա միջոցառմանը մասնակցելու համար: Մենք սիրում ենք ձեզ: Ուսուցչի դերը անգնահատելի է հայ ժողովրդի ինքնության և պետականության պահպանման գործում: Ուսուցիչը պետք է պաշտպանված լինի պետության կողմից և ունենա սոցիալական երաշխիք: Այսօր խնդիր պետք է դնել դուրսից վերադարձնել մեր մանկավարժներին, որ գան ու իրենց փորձը ներդնեն և դաստիարակեն քսանմեկերորդ դարի առաջադեմ սերունդ, որ միասնաբար դիմակայեն մարտահրավերներին:

Սիրելի մանկավարժներ ձեր բոլոր դժվարություններին կանգնած եմ ձեր կողքին ու կանգնելու եմ:

Սրանք լույ խոսքեր չեն: Ես և իմ նման մարդիկ, ովքեր իրենց կյանքում ինչ որ բանի են հասել, ուզում են լինել ձեր կողքին, օգնել ինչով կարող են: Ես ինչի որ հասել եմ, ձեր շնորհիվ է, ես միշտ ձեր աշակերտն եմ, իմ ուժերի չափով կլինեմ ձեր կողքին:

ՉԻՅ

110

ու խաղում: Ու սրա վերջը մի կաղնու ծառի տակ շնթռչելն է լինում, ու Եսպես օրեր են մթնում ու անց են կենում՝ մինչև մի օր՝ մի սև ագռավ նկատում է, որ Ես ծալապակասը դեմք է ու ուղեղը պայծառացնելով մի սուրհանդակ է վարձում ու հայդե սրան ուղարկում Յեյ-դար անունով խելոք, բայց խորամանկ սուլթան-հոր մոտ, թե բա՛

– Գիտեցած եղիր, Սուլթան ապրած կենա, քո միևնուճար որդին ձեռքից գնում է: Արի գտի դու տիրություն արա:

– Ուրեմն իմ միևնուճարը, ձեռքից գնումա, հա՛՛ ...

Սար ու ձոր արձագանքում ա՛հա Սուրհանդակը հաստատում ա. – Հա՛՛ ...

Ես որ լսում ա Ես խորամանկ, բայց խելոք խանը, որի անունն արդեն ասացինք՝ Գեյ (կամ Յեյ) դար ու Ես դարի մարդ, կանչում է իր ձիապահին ու ասում.

– Յե՛յ, ձիավոր, Ես իմ ավանակ որդուն, որին պաշտում եմ ու կյանքս էլ նրա համար կտամ, քարի տակից էլ լինի գտիր ու բեր:

Էդպես էլ լինում է. Գաթա տալով, խաբել-մափելով Ես ձիապահ-ձիավորը տղային բերում կանգնեցնում է հոր

դիմաց: Որդին տեսնելով հորը վրա է տալիս.

– Հեր, բա եղավ... էլ չեմ ուզում քեզ տեսնել, ինչու՞ Ես աղմկող գետի կամրջից անցկացրիր ինձ այս կողմ, Ես էլ եղ մի կտոր գաթին, որ իրեն երկնքում ագռավի բերին Ե, խաբվեցի, նստեցի ձիավորիդ ձին: Բա դու մարդ ես ու պիտի ասես, որդի եմ նայում, Հա՞՛ ...

Ես, որ լսում է, հայրը ՆԱՅԵԼ բառի վրա է կենտրոնանում, գլխի է ընկնում որդու ուզածը.

– Բալիկ, հարսիկ ՆԱՅԵՄ քեզ, ուզում ե՛ս, – ասում է հայրը, դրա համար եմ քեզ այստեղ բերել: Կկարգեմ, կկարգվես ընտանիք կկազմես, հարսիկին կտանես, ուզածդ կանես... – Ես... – Բա հո ես չե, շաշս, – տղային ոգևորվում է հայրը: Դու անուն ասա:

– Դե, որ եղպես է, – ծոր է տալիս ողան, – Մեղդի պես մի բան եմ ուզում: Խելոք հերը խառնվում է իրար, ասում է, որդու բերնով ինչ անուն դուրս է եկել, գնացեք այդ անունին մոտ հարսիկ ճարեք: Փչում են շփոթները ու լուրը տարածում երկրով մեկ: Դու մի ասի Ես երկրում մի փերի Մեհրի բան է լինում: Սրան երկրի ծայրամասից

գտնում բերում կանգնացնում են տղայի դիմաց: Բա՛՛

– Առ քեզ, Մեհրի բան: – Սա է որ կա իմ ուզած սերն ու կնիկը, – ասում է հիմարը ու համբուրում Մեհրի բանին:

Սա էլ հալումաշ է լինում համբուրից, դուրը գալիս է, ամուսնության առաջարկն ընդունում է ու հետն էլ պատվիրում, որ իրեն սրանից հետո Մեհրիբան խանում ասեն:

Սա, որ հայրը տեսնում է՝ ուրախությունից սրտին մի թեզ եղ է նստում, բայց չգիտես ինչի ճաք է տալիս ու սա տեղնուտեղը մեռնում է: Էլ Բաքու, Ապարան ու Լոնդոն, չի հաջողվում Ես մարդուն փրկել: Դու մի ասի, մինչ սրա սիրտը ճաքելը, սրա երկիրն ա քսան տոկոսով փող եկել գլխին ու հետո է խաբար եղել: Որպեսզի երկիրը ժառանգի Ես խակ ու ԽԱՄ տղան, մահվան մասին լուրը մի վեց ամիս ժողովրդիցը թաքցնում են:

Եսպիտվ է 20% ճաք տված երկրի դեկն անցնում է Ես խակ ու համը հանած գյադի ձեռքը, որն առիթ անառիթ՝ նայելով հարևան երկրի լեռնոտ բաղերին, երազում է իրենը դարձնել ու երկրի հարստությունը ծծելով գեղքեր է առնում, Ենքան, որ հաշիվն էլ չի իմանում...

Ասում են, որ իր քոռ ու փուլջ եղած կյանքի ամեն արևամուտին նայում է երկու կողմ, մեկ Մեհրիբան խանումին, մեկ էլ հարևանի լեռնային բաղի կողմերը ու անընդհատ նույն բանն է բարբաջում.

– Ես սարն իմն է, Ես ծառը իմն է... Կացինս հըրեն սըրած, գըռնամ բերեմ, Ծառը կըտրեմ... լեռն ինձանով անեմ:

Դե հո բոլորդ գիտեք ինչ է լինում կացինը ձեռք պահած չարի վերջը՝ սա դեռ հայտնի կլինի:

Ես օձից վերան զիլ խամ հրեջը էլ չի իմանում, որ այդպես իրենից առաջ ասել են իր խաշնարած պապերը, սրանց քոչվոր հայրերն ու ողջ ազգացեղը, բայց բախվել են Դավթի սրին ու Հայկի նետին ու սուս արած շարունակել են իրենց անասունները հարևանի պարզևած վայրերում արածացնել: Գոնե սրանով գոհանային...

Երկնքից մի հոտած խնձոր ընկավ Ես ճահճի մեջ, Ես էլ բաժին հասավ հիմարին, որ սա ուտի, հորը հիշի, Մեհրիբանի ծոցում մնա, կացինը մոռանա՝ մինչև տեսնեսք էլ ինչ նոր օյին կբերի գլխին:

Hay AZIAN

120

Կոչ եմ անում մասնակցել մրցույթներին, մրցույթները նրա համար են, որ մենք մտերմանանք, նաև հայ անհատները համախմբվեն կրթության շուրջը, միասնաբար օգնենք մասնավարժներին, լինենք նրանց կողքին:

Հարգարժան մասնավարժների հետ այսօր ամփոփեցինք Մեսրոպ Մաշտոցի անունը կրող մրցանակաբաշխությունը, պատիվ ունեցա շփվելու մրցույթի հաղթողների հետ, «Ռուսական գրքի տան» կողմից մրցանակների շնորհմանը: Մըրցանակաբաշխության արդյունքում բազմաթիվ վետերաններ, վաստակավոր ուսուցիչներ ստացան պատվոգրեր, հավաստագրեր, շնորհակալագրեր: Մըրցույթի հաղթող 16 մասնավարժ արժանացան դրամական պարգևի: Ժյուրիի հավանությանն արժանացած երկու անձ ուղեգիր ստացան «Ռուսական գրքի տան» հովանավորությամբ այցելելու Ռուսաստանի արվեստի մայրաքաղաք Սանկտ-Պետերբուրգ (մշակույթի կենտրոններ, թանգարաններ, տեսարժան վայրեր և այլն): Լիլիթ Ավետիսյանն արժանացավ «Գրան-Պրի» մրցանակին: Բոլորին շնորհավորում եմ:

Պետությունն էլ պետք է ունենա գաղափարախոսություն, տեսլական, որպեսզի ուսուցիչն այն կարողանա ներարկել այսօրվա սերնդի մեջ, կրթի մրցունակ սերունդ: Եթե չունենք կրթության մակարդակն ապահովող դպրոց, չունենք ապագա: Կկործանվի այն ազգը, որը չի գիտակցում ուսուցչի ու ուսման դերը: Ազգի հաղթանակի գաղտնիքը կրթության մեջ է: Պահեք, պահպանեք և հզորացնեք մեզ ավանդված արժեքներն ու Յայրենիքը»:

Դեղինի կողմից շատ ջերմ ընդունվեց Միեր Ավետիսյանի ելույթը, ավարտվեց երկարատև ծափահարություններով:

Բացի կազմակերպվող մրցույթներից Ավետիսյանը, և. Աբովյանի անվան մասնավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Պետրոսյանի հետ կնքել է հուշագիր, որի համաձայն համալսարանի 100 լավագույն ուսանող այսուհետ կստանա Գրիբոեդովի անվան կրթաթոշակ՝ «Ռուսական գրքի տան» կողմից: Սա ևս մեկ քայլ է որով Ավետիսյան գործարարը ցանկանում է խրախուսել ապագա ուսուցչին՝ որպես հասարակության կողմից գնահատանք՝ նրանց առաքելությանը:

Օգտվելով ընձեռված հնարավորությունից ես նույնպես, ողջունելով հանդիսատեսին, խորին երախտագիտությունս հայտնեցի Միեր Ավետիսյանին, նրա խիստ զբաղվածության պայմաններում այս շնորհակալ ու հայրենանվեր գործը հանձնառելու, մասնավարժի աշխատանքը գնահատելու, նաև՝ ինձ մասնակից դարձնելու համար: Շնորհավորելով բոլոր մրցանակակիրներին, մաղթեցի նրանք որ ձեռքբերումներ մասնավարժի դժվարին, պատասխանատու, բայց հայրենանվեր գործում:

– Ուսուցիչ են դառնում ոչ նյութական շահագրգռվածության միտումով, այլ մտադր սերնդին կրթելու, լուսավորելու նպատակով: Ուսուցիչը դա կոչում է, եթե կուզեք, մեր խաչն է, հայ ժողովրդին ծառայելու սուրբ գործը: Պատվով ու

արժանապատիվ կրենք այս խաչը: Մասնավարժի կոչմանը զինվորագրվել նշանակում է պատասխանատվության հավերժ գիտակցումով կրել այդ բեռը:

Սիրելի ուսուցիչներ, դաստիարակներ, դուք հրաշագործ եք, դուք երեխայի հոգում միշտ վառ եք պահել հայրենասիրության կանթերը: Հանճարներ չեն դառնում, հանճարները ծնվում են: Ինչպես մեծն Շիրազն է ասել. «գտեք այն մարգարտյա հատիկը, որը գտնվում է ծովի հատակում»: Միայն ուսուցչի կողմից նրանց հայտնաբերելով կարելի է կառուցել հանճարի տաճարը:

Կրթության առաջին դարբնոցը մասնավարտեզն է, որտեղ երեխան ծանոթանում է շրջապատող աշխարհին, սովորում է խոսել մայրենի լեզվով, հոգին կրթվում է երաժշտության նուրբ հնչյունների շնորհիվ, սովորում է ինչ է Յայրենիքը: Պետական մտածելակերպ ունեցող, նվիրյալ մասնավարժների մեծ բանակ կա մասնակարտեզներում, նրանք երեխայի մեջ բարու հիմնաքարը դնողներն են, հպրոցը նախահիմքի վրա մարդ շենքն է կառուցում: Ես դասեր չեմ տալիս, քավ լիցի, ես էլ ձեզանից մեկն եմ:

Ուսուցիչ՝ արժանապատիվ մարդ, դու կերտում ես մարդու անձը:

Ուսուցիչ՝ իմաստուն խոսք, երեխայի հոգու ճարտարապետ:

Ուսուցիչ՝ երեխայի հոգու թարգմանիչ: Հարգելի մասնավարժներ, այսօր աշխարհը փոփոխվում է, փոխվում են նաև մարդկանց գործունեությունը, մտածելակերպը, մենք էլ չենք կարող մնալ՝ դուրիս նույն տեղում: Գնահատենք կյանքի յուրաքանչյուր օրը՝ որպես ճակատագրի նվեր, առանց հուսահատության գործենք համարձակ, կատարենք ճիշտ քայլեր, ապրենք, աշխատենք, կրթենք ու կրթվենք: Ես ուզում եմ մարդկանց տեսնել կենսուրախ ու ժպտոտ, դժվարությունները ժամանակավոր են: Մեր ժողովուրդը ունեցել է շատ ավելի օրհասական, ողբերգական պահեր, ունեցել է կորուստներ, լուսավոր դեմքեր, անձնուրաց առաջնորդներ ու զորավարներ, ովքեր իրենց հոգացությունը ապավինել են երիցս բզկտված մեր ժողովրդին: Ունեցել ենք վերելքներ ու վայրէջքներ, հաղթանակներ, կգան ավելի հաղթական լուսավոր օրեր: Դեռ կունենանք Կարուժաններ ու Միամակնոններ, Կոմիտասներ ու Թումանյաններ, հերոս Անդրանիկներ ու Նժդեհներ:

Մութ ու ցուրտ տարիները շատ բան խլեցին մեր ժողովրդից: Կիսագրագետ ուսուցումը, հասարակազրոյա հացի խնդիրը, փակվող կրթական օջախներն ու այլ հարցեր հասցրեցին այսօրվա ընտանեկան, դպրոցական, բուհական դաստիարակական աշխատանքների բացթողումներին:

Փողոցային հաշվեհարդարները դաստիարակության թերացումն է: Բանակում կատարվող վատ դեպքերն ու երևույթները նույնպես դաստիարակության պակասի հետևանք են:

Մարդուն չսիրելը քո գործն է, բայց հարգանքով վերաբերվելը, չվիրավորելը՝ քո դաստիարակությունն է: Եթե մարդը արժեք է, պետք է գնահատել որպես արժեք, զերծ մնալ վիրավորանքներից, ինչը տարածված է այժմեան սոցցանցերում: Սա ևս

խոսում է մեր կրթական ցածր մակարդակի մասին: Շատերի մոտ ամրագրված է «ես-ը», «իմ-ը» հասկացությունները: Դարձնենք «մերը», «մենքը», ուրիշի երեխան նույնպես մերն է, ուրիշի դժվարություններն ու հաջողությունները նույնպես մերն են, լինենք միասնական, օգնենք միմյանց, սա մեր ազգային հատկություններից է, չկորցնենք այն:

Մեջբերեմ Յուլիոս Կեսարի խոսքերը. «Իմ պալատի սյուները ավելի շուտ հող կդառնան, քան որևէ մեկը կկարողանա հաղթել համախմբված հայերին»:

Եկեք բոլորս համախմբվենք, որ դիմակայենք այսօրվա մարտահրավերներին, գերազանցենք իրար սիրո ու բարիության մեջ: Ես հավատում եմ մեր ժողովրդի իմաստությանը:

Մեր հայրենակիցներից շատերը, ինչ-ինչ պատճառներով լքել են Յայրենիքը՝ ցրվելով ամբողջ աշխարհով մեկ: Արտերկրում ունենք շատ լավ մասնագետներ, բոլորին վերադարձնել է պետք: Հզորացնենք մեր դրախտային երկիրը, սա ժամանակի հրամայականն է: Արտերկրում ունենք կիրակնօրյա դպրոցներ, ուր մատուցվում է հայ մշակույթը, հայոց լեզուն, հայապահպանությունը: Հայ համայնքներում օրօրի խմբակներ են բացվում, կիրակնօրյա դպրոցներ, երգի-պարի համույթներ, դուդուկի, դաշնամուրի, ասմունքի և այլ խմբակներ: Իհարկե՝ շնորհակալություն համայնքներին հայապահպանության համար, նաև ստեղծված կրթական օջախները պահպանելու և նյութական պահանջներն ապահովելու համար: Հարց. ինչու, ինչու դրսում, պետք է վերադառնալ, համախմբվել, կրթել, խմբակներ բացել մեր երկրում: Մարդ ամեն ինչից կարող է խռովել, բայց Յայրենիքից՝ ոչ: Տարագիր ու խռովյալ զավակներ, վերադարձեք Յայրենիքի գիրկը, նա մոր նման ներդր է: Վերադառնալ, ունենալ ազգային ինքնություն, հաղթահարել միջակությունը, սովորեցնել խոսել անաղարտ հայերենով:

Ինչ է այսօր իրենից ներկայացնում մեր անապշտական հայոց լեզուն: Հեռուստահաղորդումների (բացառություններ կան) ոչ գրագետ խոսքը, կենցաղային բացասական իմաստ արտահայտող սերիալները, դերասանների առօրեական խոսելաճոճ, սոցցանցերի անզրագետ գրառումները՝ ցավ են ապրում: Ինչ եք կարծում, ուր է կորել մեր աստվածային հայոց լեզուն: Հիշենք Նառա Շլեպյանին, Արդա Ներսիսյանին և մյուսներին՝ հղկված, զըտված, իմաստուն ու գրագետ խոսքը, դաստիարակական հայրենասիրական կինոնկարների ցուցադրումը և այլն: Հարգարժան հեռուստաաշխատակիցներ, վերադարձեք գրագետ, անաղարտ լեզվի արմատներին՝ շատ բան կգտնեք, ոչինչ չկորցնելով: Բոլորիդ է հայտնի Վիկտոր Համբարձումյանի կտակը հայոց լեզվի մասին: Նա, լինելով աշխարհահռչակ աստղագետ գիտնական, ասում է. «Իմ ամենամեծ ձեռքբերումն ու երջանկությունը հայոց լեզվին տիրապետելն է: Պահպանեք հայերենը, այն աղոթքի լեզու է»:

Եթե մեծն Կոմիտասը երգ ու երաժշտություն պարգևեց, ապա Մեսրոպ Մաշտոցը՝ գիր ու գրականություն: Երաժշտությունը,

«Հովհաննես Թումանյան-150» հուշամեդալ՝ վաստակաշատ մանկավարժ Արշակ Թումանյանին



Դսեղում, Մեծն Լոռեցու տուն-թանգարանում, տեղի ունեցավ ևս մեկ Թումանյանաշունչ միջոցառում: Հեղինակը արվեստագետների կողմից ճանաչված և ըստ արժանվույս գնահատված «Արվեստագետ» կրթամշակութային ՀԿ-ի խորհուրդն էր: Մասնակցեցին խորհրդի անդամներ, արվեստագետներ, հյուրեր երկրի տարբեր քաղաքներից: Նույն օրը թանգարան էր այցելել Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Սյուզաննա Խոջամիրյանը /և հանդիսանում է երկրի թանգարանային համակարգի, այդ թվում՝ նաև Դսեղի տուն-թանգարանի ղեկավար/ ով սիրով միացավ մասնակիցներին, ողջունեց և արժևորեց ՀԿ-ի հերթական նախաձեռնությունը:

Պարույր Սևակի «Անլուծելի գանգակատուն» պոեմից Թումանյանի մասին մի

հատվածի ամունքից հետո ՀԿ-ի նախագահ, «Արվեստագետ» հանդեսի գլխավոր խմբագիր Իվան Անտոնյանը ներկայացրեց Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջի երկարամյա տնօրեն, այժմ՝ փոխտնօրեն, վաստակաշատ մանկավարժ, ծնունդով դսեղցի Արշակ Թումանյանին, ով մեծ ավանդ ունի քոլեջի կայացման գործում: Հենց նա էլ արժանացավ «Արվեստագետ» կրթամշակութային ՀԿ-ի խորհրդի միաձայն որոշմամբ հաստատված «Հովհ. Թումանյան-150» հուշամեդալի: Այն Արշակ Թումանյանին հանձնեց «Արվեստագետ» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, Պատվավոր պրոֆեսոր, Արշակ Թումանյանի նախկին դասախոս Ռոբերտ Սահակյանը: Ընդհանուր կարգով

ասացին Թումանյան խոշորացված համայնքի ղեկավար Սուրեն Թումանյանը, ՀՀ ժողովրդական արտիստ, Վանաձորի Պատվավոր քաղաքացի, պրոֆեսոր Հակոբ Ազիզյանը, Ի.գ.դ., պրոֆեսոր, գեներալ-գնդապետ Էդուարդ Մանևիկյանը, տողերիս հեղինակը, «Մաշտոց» հանդեսի գլխավոր խմբագիր Գագիկ Աթաբեկյանը, ՀՀ վաստակավոր արտիստ, Վահագնաձորի Պատվավոր քաղաքացի Ստեփան Դալաքյանը, ով կատարեց Գուսան Չաքարյանի «Ամսահ Թումանյան» երգը: Արշակ Թումանյանը շնորհակալություն հայտնեց խորհրդի կազմից, իր հերթական պարգևը համարեց ստացած պարգևների մեջ անչափ կարևոր:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

130

Նոտան պահպանում է աշխարհը, իսկ տառերն ու լեզուն՝ ԱՉԳԸ:

Լեզուն մեր պետականության հիմնաքարն է, պետական արժեքներից գլխավորը, փայլախյուղն ու պահպանենք հայոց լեզուն:

Դասախոսներ, դպրոցի ուսուցիչներ, դաստիարակներ, դուք՝ որպես գիտելիքների և արժեհամակարգի հարուստ պաշար ունեցողների խորհրդանիշ, անթաքույց նվիրվեք դաստիարակությանն ու կրթությանը, անաղարտ պահելով հայոց լեզուն, բարձրացրեք ուսման որակը, ամրագրեք անցիակի կրթության և ժամանակակից տեխնոլոգիաների համադրման դրական սկզբունքները:

Կոչ եմ անում՝ վերադառնանք հայրենիք, հզորացնենք մեր երկիր Հայաստանը:

Մեզ բոլորիս մաղթում եմ սթափ մտածողություն, համբերություն, համոզվույթ, որ Հայաստանը կարող է դառնալ նորարարական գաղափարների կիրառման կենտրոնակ երկիր՝ գիտության, մշակույթի, տնտեսության և այլ բնագավառներում: Թող ամենակարող Աստծո ձեռքը պահպանի լինի համայն հայությանն ու հայատարածքին, ժայռին բազմած այն բերդին, որին ՀԱՅՐԵՆԻԻԷ ենք անվանում:

Այսպե՛ս ԱՆՏՈՆՅԱՆ

ՆԱՄՈՒՆ ՈՒ ԹԱՍԻԲԸ ԼՐԻՎ ԵՆ ՄԵՌԵԼ ՄԵՐ ՄԵՋ ...

Ես չգիտեմ որևէ կենդանու, որ իր ներկայությամբ փորձեն վնասել, առավել ևս՝ փորձեն սպանել նրա ձագին և նա անտարբեր նայի դրան ու չփորձի ամեն կերպ փրկել, առավելագույնս պաշտպանել նրան, էլ չեն խոսում մարդ արարածի մասին:

Բացի 2020 թ. 44-օրյա պատերազմում և դրանից հետո Արցախի և Հայաստանի տված բազում մարդկային ու այլ կորուստներից, մինչ այսօր Հայաստանը տալիս է մեկ այլ գերկարևոր կորուստ. նա վախից՝ հոգեբանորեն համարյա դարձել է Արդրեսանի գերին ու ծառան, քանզի նա ինչ թելադրում է, Հայաստանն ամբողջությամբ համաձայնվում է, համարյա դա ընդունելով որպես հրաման: Իսկ բոլորին է հասկանալի, որ Արդրեսանն արդեն այնքան է հղիացել, որ իրեն թվում է, կարելի է միանգամից Հայաստանին ամբողջությամբ տիրել, քանզի կարծում է, որ սրանից ավելի համար պահ չի լինելու և ընձեռնած ինտրոդուկցիայից պետք է լիարժեք օգտվել: Նա ուղիղ այդպես չի արտահայտվում, առաջարկում է մեր տարածքները հերթով՝ մաս-մաս հանձնել, բայց հոգու խորքում ուզում է ամբողջապես, վերջնականապես ավարտել այդ հարցի լուծումը:

Հայաստանի համար ստեղծված այս որբերգական վիճակն ամենայն մանրամասնությամբ բազմիցս է ներկայացվել հայ ժողովրդին, սակայն չափազանց զարմանալիորեն ժողովրդի կողմից համարյա արձագանք չկա, կարծես խորը քնի մեջ է կամ մեռած է: Սրա մասին բարձրաձայնեցի լոկ այն պատճառով, որ ոչ միայն մեկ հայ մարդ, այլ մի ամբողջ ժողովուրդ՝ հայ ժողովուրդն այժև է փակվում և բացարձակ քայլ չի անում իր զավակին՝ Հայաստանը և նաև իրեն՝ ոճրագործ թուրքից փրկելու համար և դա այն դեպքում, երբ Հայաստան երկիրը լիովին միայնակ է՝

215

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՐԸ ՆՐԱ ԺՈՂՈՎՈՒՐՆ Է

Հայաստանի առջև ծառայած իսկապես ճակատագրական խնդիրների հուսալի, երկարաժամկետ լուծման համար առաջին քայլը մեր ժողովրդի, նրա բոլոր քաղաքական, մտավոր, պաշտպանական, տնտեսական ուժերի ու ռեսուրսների համախմբումն է հատկապես երկրի ներսում: Այս բարդ խնդրի անհապաղ լուծումը հնարավոր է երկրի տնտեսական, գիտական, մշակութային զարգացման մակարդակի խելացի, կտրուկ բարձրացման, հասարակության մեջ ժողովրդավարության, ազատության և ներդաշնակության մակարդակի, կրթության և բժշկական օգնության որակի զգալի բարելավման հաշվին: Այս բոլոր առաջնահերթ խնդիրների լուծումը (ինչպես նաև մեկ այլ հրատապ խնդրի՝ հզոր ռազմարդյունաբերական համալիրի և ուժեղ բանակի ստեղծումը), անհնար է առանց մեկ այլ ակնհայտ պայմանի՝ երկրի ազգային տնտեսական արդյունաբերության մեխանիզմի քանակական և որակական ցուցանիշների արդյունավետության արագ և կտրուկ բարձրացման:

Բազմաթիվ ի սկզբանե հետամնաց, աղքատ երկրների փորձը, նրանց արագացված անցումը բարեկեցիկ երկրների կատեգորիա, ապահովվեց նրանց ընդերքի հարստության գրագետ, արդյունավետ օգտագործմամբ՝ որպես զարգացման ակնհայտ պոտենցիալ սկզբնական կապիտալ:

Մինչդեռ հայ ժողովուրդը, ըստ էության, կուրորեն կամ անտարբեր անցնում է նման բացառիկ և միաժամանակ բնական և մատչելի հնարավորության կողքով: Համեմատելիս, այդ մասին են վկայում Հայաստանի օրենսդրության մեջ ստորև նշված էական հակասություններն ու միջադեպերը, որոնք թույլ չեն տալիս ընդերքի տիրոջը՝ ժողովրդին, իրավամբ տնօրինել իրենց հարստությունը և սկսել (առաջին հերթին այդ հիմքով) երկրի առջև ծառայած գոյության խնդիրների արագացված լուծումը:



1990 թվականի օգոստոսի 23-ի Հայաստանի Անկախության հռչակագրում (7-րդ կետում) գրված է. «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է»: Բայց Հայաստանի 2015 թվականի դեկտեմբերի 6-ի Սահմանադրությունը այլ բան է սահմանում (10-րդ հոդվածի 2-րդ կետում). «Ընդերքը և ջրային ռեսուրսները հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը»:

Նույնը բխում է ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 28-ի օրենսգրքից. (11-րդ հոդվածի 1-ին կետ). «Հայաստանի Հանրապետության ընդերքը հանդիսանում է պետության բացառիկ սեփականությունը, այն կարող է փոխանցվել օգտագործելու միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով»: Սակայն սույն օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է.

«Ընդերքի օգտագործման և պահպանության, ինչպես նաև ընդերքի օգտագործման հետ կապված բնության և շրջակա

միջավայրի պահպանության պետական կառավարումն իրականացնում է կառավարությունը՝ իր իրավասության սահմաններում»:

Իսկ «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 6-ի օրենսգրքի 6-րդ հոդվածի 1.2 կետում ասվում է. «Հայաստանի Հանրապետության ընդերքի տիրապետումը Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունն է»: Անկախության հռչակագրի և Հայաստանի Սահմանադրության նորմերի օրենսդրական նման այլասերումը «անբարեխիղճ» պաշտոնյայի համար հսկայական կոռուպցիայի մեծ հնարավորություններ է բացում:

Պաշտոնյան, լինելով վերադասի կամը կատարող վարձու աշխատող, առանձնահատուկ պատասխանատվություն չի կրում ժողովրդի և պետության առջև:

Այսպիսով, փաստացի Հայաստանի ներկայիս գործող օրենսդրությունը ոչ միայն անընդունելիորեն հակասական է, այլև անհաղթահարելի արգելք չի դնում ժողովրդի բնական ռեսուրսների թալանին և անխուսափելի պատիժ չի սահմանում այդ թալանի համար:

Ահա թե ինչու այսօր Հայաստան պետության կարևոր, առաջնահերթ խնդիրներից մեկն է Հանրապետության Սահմանադրության և Ընդերքի մասին օրենսգրքում որպես պարտադիր սկզբունք ամրագրել՝ ընդերքի և դրանից դիփիդենտներ ստանալու ժողովրդի իրավունքը:

Հայաստանի Անկախության հռչակագրի 3-րդ կետում ասվում է. «Հանրապետության ժողովրդի անունից ներկայանալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին», այլ ոչ թե վարձու աշխատողին՝ պաշտոնատար անձին:

Գեորգի ԱՆՏՈՆՈՎ-ՄԻՐՉԱԿԱՆՅԱՆ, Կուղբասի հայերի միության նախագահ, տնտեսագետ, իրավաբան

140

ուրիշ ոչ մի այլ պաշտպանող չունի: Չեմ կարծում, որ իրականությունը սա է, սակայն հայ ժողովուրդն այս ողբերգական իրավիճակում իրեն այնպես է պահում, կարծես ամեն ինչ նորմալ է, մեզ ոչ մի վտանգ չի սպառնում և նա զբաղված է զուտ ընթացիկ առօրեական գործերով, անհասկանալի «ֆեստիվալներով»:

Արցախը հանձնվեց, Հայաստանից 200 և ավելի քառ.կմ տարածք է բռնագրավված, թշնամին ինչ ուզում է, իշխանությունները հոժարակամ համաձայնվում են. Տավուշի մարզի գյուղերն աստիճանաբար վերցնում են, անթաքույց բարձրաձայնում են «Սյունիքի միջանցքի», «անկավանդի», մյուս մարզերի գյուղերի, մշտապես հոխորտում ու փորձում են նոր պատերազմով ու բազում այլ ճնշումներով վախեցնել ու ահաբեկել մեզ և նման շատ այլ բաներ ու այսբանից հետո ժողովուրդը տեղից չի շարժվում՝ քայլ չի անում, բա էլ ուրիշ ի՞նչ պետք է անեն, որ ժողովուրդը գիտակցի վիճակի լրջությունը, չչարունակի քնած մալ ու փորձի տեղից շարժ անել: Լավ, ուրիշ էլ ի՞նչ պետք է լինի, որ այս ժողովուրդը սթափվի և վայրկյան շուտ լծի հայրենիքի փրկության սուրբ գործին, քանզի հայրենիքն արդեն ձեռքից գնում է և առանց այն էլ, արդեն շատ ենք ուշացել:

Կարողալով ու վերլուծելով մեր պատմությունը, միշտ համոզված եմ եղել, հայ ժողովուրդը միշտ էլ իր հայրենիքի կողքին է եղել, միշտ էլ հերոսաբար պաշտպանել է այն, հայը երբեք չի խնայել անգամ իր կյանքը և այդ գնով փրկել է հայրենիքը: Լիովին անհասկանալի է, թե ի՞նչ է կատարվում հայ ժողովրդի հետ, որ անտարբեր նստել ու ոչ մի քայլ չի անում հայրենիքի պաշպանության ու փրկության համար: Ի՞նչ է, ստացվում է, որ նամուսն ու թախիբը լրիվ են սեռել մեր մեջ ... Լավ, ի՞նչ պետք է անել նրան շարժելու համար ...

Անահիա ՄԱՂԱԶՅԱՆ
Ճարտարագիտական ակադեմիայի թղթակից անդամ

Հովհաննես ԾԻՐԱԶ



Մեսրոպ Մաշտոցն ասաց՝ որդիս, Էլ ինչո՞վ ես հույսը բերդիս, – Էլ հայրենիք ինչո՞ւ եկար, Թե պիտ խոսես օտար լեզվով, Խմես հայոց գինին նեկտար, Կենաց կանչես օտար լեզվով, Զարդես հայոց վարդերն ու հեզ Աղջիկ կանչես օտար լեզվով:

Իրավ քանի լեզու գիտես՝ Այնքան մարդ ես՝ իրավն ասին, Բայց, որ քո հայ լեզուն չունես, Էլ ի՞նչ հույս ես քո Մասիսին, Որ թողել ես քո մայրենին՝ Հարամ է քեզ հայոց գինին, Հարամ է քեզ աղջիկն հայոց, Հայոց սիրտը, Մասիսն հայոց: Մայր հայրենիքն էլ ի՞նչ սրտով

Քո ոտքերն էլ գրե՛ վարդով... ... Ա՛խ, չէ, Մասիսն հալալ է քեզ, Հայոց վշտում դու մեղք չունես, Հալալ է քեզ հողն հայրենի, Թող քեզ ջուրն էլ դառնա գինի: Զանգի հայոց վայ սփյուռքում Պանդխտությունն է դեռ պոկում:

Հայի բերանից հայոց լեզուն, Օտարն հայոց մահն է ուզում... Բայց նա է հայ, ով հովազի Արևախում երախումն էլ Իր մայրենի լեզվով խոսի, Սոր կաթի հետ ծծած լեզվով, Որ հայ գետը ծով ծնի, ծով, – Ժխորում էլ Բաբելոնի Խոսի լեզվով իր մայրենի Հայոց լեզվով, որ միշտ ջահել, Մեզ բյուր դարեր հայ է պահել:

1886թ. ռուսական մարդահամարի խոսուն թվերը



1893 թ. Կովկասի կառավարչապետության քաղաքացիական մասի Անդրկովկասյան վիճակագրական կոմիտեի հրամանով հրատարակվել են 1886 թ. ընտանեկան ցուցակների հիման վրա կազմված Անդրկովկասի բնակչության վիճակագրական տվյալները^[1]:

Պետական խորհրդի եզրակացության հիման վրա 1886 թ. փետրվարի 24-ին, ռուսական կայսեր հաստատմամբ, սկսվեց ամբողջ Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի քաղաքների դասի, գյուղացիական և օտարազգի բնակչության ընտանեկան ցուցակների կազմումը: Դրանց ձևը պետք է հաստատվեր Կովկասի կառավարչապետության քաղաքացիական մասի ղեկավարի կողմից՝ Ներքին գործերի և Ֆինանսների նախարարների համաձայնությամբ: Կովկասի կառավարչապետության քաղաքացիական մասի ղեկավար գեներալ-ադյուտանտ իշխան Ալեքսանդր Դոնդուկով-Կորսակովը ընտանեկան ցուցակների ձևի և կարգի կանոնների մշակումը հանձնարարեց Կովկասյան (հետագայում՝ Անդրկովկասյան) վիճակագրական կոմիտեին: Վերջինիս աշխատանքներին պետք է մասնակցեին Գերագույն խորհրդի անդամները, նահանգապետներն ու մարզերի կառավարիչներն, իրավասու այլ անձինք:

Կոմիտեի կողմից ընտանեկան ցուցակների վերամշակված ձևը կառավարչապետի կողմից հաստատվեց 1886 թ. ապրիլի 21-ին:

Անդրկովկասի բնակչության ընտանեկան ցուցակների կազմումն սկսվեց 1886 թ. մայիսին և ավարտվեց նույն տարվա վերջին: Կառավարչապետի հանձնարարությամբ Անդրկովկասի նահանգային վիճակագրական կոմիտեի ներկայացրած նյութերի մշակումը հանձնարարվեց Կոմիտեի գլխավոր քարտուղար, գլխավոր խմբագիր, պետական խորհրդական Նիկոլայ Չեյդիցին: Ծանոթանալով ընտանեկան ցուցակներից ստացված արդյունքներին և նույն տարում երկրամասի գլխավոր իշխանությանը ներկայացնելով Անդրկովկասի բնակչության թվաքանակի ու նրա՝ դավանաբանական պատկանելիության մասին աղյուսակները՝ գլխավոր քարտուղարը 1886 թ. դեկտեմբերի 17-ին կոմիտեին և ներկայացնում ցուցակների կազմման նախագիծը: Ըստ դրա՝ յուրաքանչյուր քաղաքի և գյուղի համար կարևորվում էին ներառել հետևյալ տվյալները՝ ծների թիվը, բնակիչների արական և իգական սեռերի թիվը, յուրաքանչյուր սեռի բաշխվածությունը՝ ըստ ազգությունների, դավանանքի և իսկության, արական սեռը՝ ըստ տարիքի, ընտանեկան լեզվի, գրագիտության և կրթության, բաշխվածությունը՝ ըստ ծների զբաղվածության, և տեղեկություններ քաղաքների ու գյուղերի ունեցվածքի մասին:

1887 թ. մայիսի 19-ին վերոնշյալ նախագիծը հաստատվեց կառավարչապետի կողմից: Կոմիտեն անցավ ընտանեկան ցուցակների նյութերի մշակմանը: Անհրաժեշտ տեղեկությունները պարտադիր ներկայացվել են նահանգների և մարզերի ղեկավարների կողմից:

Ըստ 1886 թ. ընտանեկան ցուցակների՝ Երևանի նահանգն ուներ 670.405 բնակիչ:

Երևանի նահանգի քաղաքների (Երևան, Ալեքսանդրապոլ, Նախիջևան, Օրդուբադ, Նոր Բայազետ) արական և իգական բնակչության ընդհանուր թիվը 57.594 մարդ էր: Այն, ըստ ազգային պատկանելության, ուներ հետևյալ պատկերը՝ ռուսներ՝ 403, հույներ՝ 321, քրդեր՝ 38, հայեր՝ 39.941, թաթարներ՝ 16.732, այլ ազգություններ (վրացիներ, իմերեթցիներ, լեհեր, գերմանացիներ, հրեաներ, գեյուրներ)՝ 159 մարդ:

Երևանի նահանգի գավառների (Երևան, Ալեքսանդրապոլ, Նախիջևան, Նոր Բայազետ, Սուրմալու, Շարուր-Ղարաբաղյազ, Էջմիածին) արական և իգական բնակչության ընդհանուր թիվը 612.811 մարդ էր: Այն, ըստ ազգային պատկանելության, ուներ հետևյալ պատկերը՝ ռուսներ՝ 3.749, լեհեր՝ 4, հույներ՝ 705, քրդեր՝ 36.440, հայեր՝ 335.759, ասորիներ՝ 1.682, վրացիներ՝ 4, իմերեթցիներ՝ 143, թաթարներ՝ 234.325 մարդ:

Քաղաքները և գավառները	ռուսներ	լեհեր	գեյուրացիներ	հայեր	քրդեր	հայեր	գեյուրներ	հրեաներ	ասորիներ	վրացիներ	իմերեթցիներ	նոսթալներ	թաթարներ
Երևան (նահանգային քաղաք)	313	14	7	-	-	-	-	16	-	18	-	-	7.228
Երևանի գավառ	60	-	-	-	8.129	36.426	-	-	1.381	-	-	-	52.880
Ալեքսանդրապոլ (գավառային քաղաք)	65	22	-	321	-	22.921	-	4	-	11	5	-	881
Ալեքսանդրապոլի գավառ	957	4	-	587	3.739	101.634	-	-	-	-	-	-	4.580
Նախիջևան (գավառային քաղաք)	24	-	-	-	-	2.041	38	-	-	-	-	-	4.836
Օրդուբադ քաղաք	1	-	-	-	-	411	-	-	-	-	-	-	3.787
Նախիջևանի գավառ	165	-	-	-	473	33.018	-	-	4	-	-	-	39.222
Նոր Բայազետ (գավառային քաղաք)	-	-	-	-	38	7.426	-	24	-	-	-	-	-
Նոր Բայազետի գավառ	2.567	-	-	118	2.405	61.367	-	-	-	-	-	143	29.523
Մուրմալուի գավառ	-	-	-	-	14.619	22.096	-	-	-	-	-	-	34.351
Շարուր-Ղարաբաղյազի գավառ	-	-	-	-	880	17.094	-	-	232	-	-	-	43.566
Էջմիածնի գավառ	-	-	-	-	6.195	64.124	-	-	69	-	-	-	30.203
Ընդամենը	4.152	40	7	1.026	36.478	375.700	38	44	1.682	33	5	143	251.057

1886 թ. ընտանեկան ցուցակներում թյուրքական ազգությունների շարքում նշված են օսմանլի թուրքեր, ադրբեջանցի թաթարներ, հյուսիսային թաթարներ (նոգայցիներ, կումիկներ) և կազանյան թաթարներ: Ադրբեջանցի թաթարներ ասելով՝ նկատի են ունեցել Իրանի հյուսիսարևմտյան Ատրպատական նահանգի տարածքից Այսրկովկասում բնակություն հաստատած թյուրքական ծագում ունեցող բնակիչներին: Հետաքրքիր է՝ կոմիտեն ինչ սկզբունքով է առաջնորդվել աղյուսակներում ազգությունների հերթականությունը նշելիս:

Վերոհիշյալ վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ հայ ազգաբնակչությունը գերակշռում էր թե՛ Երևանի նահանգի քաղաքներում, թե՛ գավառներում:

[1] Անդրկովկասյան տարածաշրջանի բնակչության վիճակագրական տվյալների մի շարք՝ քաղված 1886 թվականի ընտանեկան ցուցակներից:



ԱՄՓՈՓՈՒՄ

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից սեպտեմբերի 17-20-ը Երևանում կազմակերպված Համաշխարհային հայկական երկրորդ գագաթնաժողովի

Օրակարգի մշակումն իրականացրել էր շուրջ 100 սփյուռքահայ փորձագետների և համայնքային ներկայացուցիչներից կազմված խորհրդատվական մարմինը:

Հիմնական ուղղություններն էին՝ անվտանգության, կայուն զարգացան, համայնքների հզորացման և հայրենադարձության հարցերը, որոնք ներկայացվեցին 6 պանելային քննարկումների, 22 համաժամանակյա նիստերի, կլոր-սեղան քննարկումների, Ted գրույցների, 3 թեմատիկ ցուցահանդեսների և մշակութային միջոցառումների ձևաչափերով 180 բանախոսների և 25 երկրից մոդերատորների կողմից: Ընդհանուր առմամբ մասնակցում էր 1000 հրավիրյալ 60 երկրներից: Գագաթնաժողովի կազմակերպիչներն ակնկալում են, որ սփյուռքի ընդգրկումը գագաթնաժողովին ծառայելու է որպես ռազմավարական քննարկումների, համերաշխության, փոխըմբռնման և լուծումների կամուրջ, որի շնորհիվ հետագա համագործակցությունը տարբեր բնագավառներում կապահովի կայուն արդյունքներ:

Մեզ հաջողվեց գրուցել տարբեր երկրներից ժամանած նաև Հայաստանը ներկայացնող բազմաթիվ մասնակիցների հետ: Նշենք, որ ոմանք սկզբում դեռ հստակ չէին պատկերացրել, թե որքանով է օգտակար լինելու միջոցառումների շարքը կայուն համագործակցության համար, բայց շփումների և գրույցների, գործնական առաջարկների արդյունքում որոշակի դրական տեղաշարժերի ակնկալիք ունեն: Նշենք, որ բոլոր պանելային քննարկումները անցել են բանախոսների և մոդերատորների ակտիվ մասնակիցությամբ, ովքեր ելույթներից հետո

պատասխանել են գագաթնաժողովի մասնակիցների հարցերին: Գագաթնաժողովն արժևորելով որպես հաջողված և խոստումնալից՝ հատուկ անդրադարձ կատարվեց տարբեր բնագավառներում ինտեգրմանը: Բոլոր խնդիրների գերխնդիրն ինտեգրման հարցում մտնում է հայության տարբեր մասերի իրարից տարանջատումը, որտեղացի լինելն՝ անկախ հանգամանքներից: Սփյուռքում հայկական ինքնության պահպանման հրամայականը Եական խնդիր է, քանի որ, ինչպես նշվեց, հայ իրականության մեջ ինտեգրումը խաթարվում է հենց նրանով, որ, երբ ԱՄՆ ում բնակվող հայերը Հայաստան են գալիս այստեղ նրանք ընկալվում են իբրև ամերիկացի, իսկ Նահանգներ մեկնողներին այստեղ ընդունում են՝ հայ կոչելով: Եվ հենց այս բաժանարար մոտեցումն է, որ խանգարում է ինքնության լիարժեք դրսևորմանը:

Պանելային գրույցներն ու շփումներն ընդգծեցին հայրենադարձությանն առնչվող հարցերի լուծումը՝ կարևորելով փաստը, որ Հայաստանում ապրելով ավելի հեշտ տեղի կունենա ինտեգրումը երկրի սոցիալ-քաղաքական կյանքին: Երիտասարդական խընդիրների քննարկման ընթացքում մեծ տեղ հատկացվեց ինտեգրմանը, շեշտադրվեց Արմաթ լաբորատորիաների ցանցի ընդլայնումը և արհեստական բանականության դերի մեծացումը հետագա զարգացումների ընթացքում: Միևնույն ժամանակ, խնդրի նկատմամբ հստակ էր մոտեցումը՝ Հայաստանն ու սփյուռքը ինքնուրույն միավորներ են և գործընթացները պիտի տեղի ունենան այս սկզբունքին համահունչ: Արդյունավետ համագործակցության և բիզնես շփումների ու գործունեության որոշակի քայլեր արդեն նկատելի էին հենց գագաթնաժողովի օրերին: Մասնակիցներից շատերը վստահ էին, որ նման հանդիպումները օգտակար կլինեն Սփյուռք-Հայաստան հետագա զարգացումների առումով թե սկսակ բիզնեսների և թե արդեն կայացած բիզնեսների համար՝ հիմք դնելով նոր համագործակցությունների:


ЛЮДИ, ГОДЫ, СУДЬБЫ**Подвиг на всю жизнь**

Человек, в головном мозге которого

44 года «жила» вражеская пуля

Одним из освободителей Родины от немецко-фашистских захватчиков был Мкртыч Артемович Макарян, сделавший славный боевой путь в легендарной 409-й армянской дивизии.

В годы Великой Отечественной войны, проходя службу в 409-й дивизии, Мкртыч Макарян был командиром взвода 684-го полка этой дивизии и пользовался большим уважением среди соратников. Он принял участие в страшных боях за Моздок, форсировании реки Днепр, Яско-Кишиневской военной операции, где отличился своими подвигами и удостоился ордена Красной Звезды и различных медалей. Весной 1944 года в одном из ожесточенных боев, недалеко от Кишинева, он получил тяжелое пулевое ранение в голову и был госпитализирован. Первую медицинскую помощь ему оказал уроженец города Кировакана Грант Ованесович Булгадарян, бывший санитарный инструктор того же полка. Грант Ованесович вытащил соотечественника из-под яростного огня противника и довез до санитарного полка. После нескольких



Мкртыч Артемович Макарян

месяцев лечения в госпитале в августе 1944 г. М. Макарян как инвалид второй группы демобилизуется и возвращается в родной город Кировакан, работает в

различных отраслях народного хозяйства города.

У Мкртыча Макаряна, коммуниста, ветерана Великой Отечественной войны и труда, было 10 детей. Памятным событием в его семье стал 1978 год, когда он и его жена Шармах отпраздновали пятидесятилетнюю годовщину свадьбы – золотую свадьбу. Участники этого уникального торжества с восторгом смотрели на пожилых «жениха и невесту», жизненный пример которых достоин похвалы.

Мкртыч Макарян умер 22 марта 1988 года в возрасте 86 лет. Даже после окончания войны пуля врага, «обитавшая» в головном мозге М. Макаряна, продолжала «гулять» вместе с ним, не смогла лишиться его желания жить. О существовании пули напоминали только его усилившиеся время от времени головные боли. Это само по себе было уникальным подвигом: удерживать пулю в голове на протяжении 44 лет. В ходе вскрытия был зафиксирован необычный факт. На глубине 7 см от поверхности правого полушария головного мозга погибшего, пройдя через теневой слой мозговой ткани, пуля оказалась в полости правого

219



Макарян Мкртыч и Шармах Казарян и их дети: Владимир, Кима, Эмма, Лена, Светлана, Рафаел, Лаура, Анаит, Давид, Камо



Династия Макарян

180

полушария головного мозга. Она имела длину около 4 см, диаметр – 1 см и весила почти 14 граммов.

Врач-аутопсолог, патологоанатом А. Н. Паравян с удивлением отметил: «Этот случай удивительный, уникальный. Разрез был полностью покрыт шрамами. В медицинской практике редко случается, когда при наличии инородных тел в жизненно важных органах (мозг, сердце, легкие и др.) человек продолжает вести активный образ жизни, работать на радость родственникам и друзьям».

Как вспоминал и рассказывал свидетель происшествия Грант Булгадарян, при оказании первой медицинской помощи и по дороге в больницу М. Макарян не терял сознания, его мысленная ориентация и подвижность не были нарушены, свободно общался с окружающими...



В центре – жених и невеста

Дочь М. Макаряна Лаура с большой любовью и трепетом отзывается о Гранте Булгадаряне, оказавшем первую помощь ее отцу, ставшем после войны самым близким и желанным другом семьи Макарян.

Пуля, «гулявшая» с Мкртычем Макаряном 44 года, которая после извлечения



Свадебное приглашение

из его головы до сих пор хранится в Музее военной истории «Мать Армения», экспонируется в выставочном зале, посвященном 409-й стрелковой дивизии.

Наринэ ХАЧАТРЯН,
научный сотрудник Музея военной истории «Мать Армения» Министерства обороны РА.



Փարիզի Օլիմպիական խաղերում

Փարիզի Օլիմպիական խաղերում Հայաստանի պատվիրակությունն արժանացավ 4 մեդալի՝ 3-ն արծաթ, 1-ը բրոնզ: Օգոստոսի 4-ին Հայաստանի առաջին մեդալը նվաճեց մարմնամարզիկ Արթուր Դավթյանը՝ դառնալով արծաթե մեդալակիր:

Օգոստոսի 7-ին հունահռոմեական ոճի ըմբիշ Ալեքսանյանը Օլիմպիական խաղերի մրցապայքարի եզրափակչում պարտվեց իրանցի մարզիկին և դարձավ արծաթե մեդալակիր:

Օգոստոսի 7-ին 77 կգ քաշային հունահռոմեական ոճի ըմբիշ Մալխաս Ամոյանը 6:5 հաշվով հաղթեց Ուզբեկստանը ներկայացնող Արամ Վարդանյանին և նվաճեց բրոնզե մեդալ:

Օգոստոսի 10-ին պայքարի մեջ մտած գերծանր քաշային ծանրորդ Վարազդատ Լալայանն արժանացավ արծաթե մեդալի:

ВЕЧНО ЖИВАЯ ПОЭЗИЯ

К 110-летию Амо САГИЯНА

Невозможно без волнения и большой человеческой любви вспоминать имя Амо Сагияна, поскольку он был не только прекрасным тончайшим поэтом, но и обаятельным человеком, личное общение с которым всегда доставляло огромную радость. И даже сейчас, хотя с момента его ухода прошло уже столько лет. Как-то не ощущаешь его среди мертвых. Недаром ведь сказано: «Поэты молодеют, умирая».

14 апреля – день рождения поэта, личности выдающейся, неоднозначной. В этом году ему исполнилось бы 110 лет. Но он не из тех, кого вспоминают лишь в юбилейные дни. Он поэт удивительный, редкостный, любимый всеми. Амо Сагиян и при жизни стоял особняком среди личностей в высшей степени духовных, а уж ныне, когда поэтическим званием удостаивают графоманов, он и вовсе похож на неразделанную комету в армянской поэзии.


Во всяком случае, ни словаря такого самоцветного, ни свободной и сильной, истинно поэтической речи, глубокой, как августовское небо, и печальной, как осенняя морозящая даль, ни у кого другого ныне не найдешь. Как и такой размашистой, самобытной палитры, захватившей в свою орбиту, кажется, все века армянской доли, – от седой древности до взбаламученной злободневности.

